

# ԱՆԱՏԻՏ

ՀԱՆՊԵՍ ԱՍՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒՄ 1901

ԹԻԻ 2

ԳԵՍԵՅԲ

— 0 —

## ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

«Նոր Կեանք»ի վերջին թիւերէն մէկուն մէջ Արփիարեան կը քննադատէ այն յօդուածը զոր Բիէն Քիլեառ «Օրոն»ին մէջ հրատարակեց Օսման փաշա քիւրտ սուտ-հերոսին առթիւ: Արփիարեան Հայոց համար այնքան վտանգաւոր կը համարի Ապտիւրրահմանի յայտարարութիւնները որքան Օսմանի մը պոռոտախօսութիւնները, եւ առանց ո եւ է վարանման կը վճռէ թէ «բոլոր Քիւրտերը ուրիշ բան չըլլալով բայց եթէ արիւնարբու աւազակներ», ոչ մէկ համաձայնութիւն անոնց եւ Հայերուն միջեւ անհնար է, եւ թէ Քիւրտերու մէջ հայրենասիրական զգացման ծնունդին նկատմամբ Ներսիսեանցիներու համակրական արտայայտութիւնները միմիայն վնաս կրնան բերել հայկական դատին:

Ինչ որ զարմացուց զիս այդ յօդուածին մէջ որ գրուած է բաւական կծու, տեղ տեղ նոյն իսկ բարկաճայթ թոնով մը, այն է որ Արփիարեան անուանած չըլլայ Քիլեառի յօդուածին յղացման ու հրատարակման միակ շարժառիթ եղող անձը, այսինքն զիս Վիլիամ անունս յիշատակած էր իր յօդուածին մէջ, եւ Արփիարեան գիտէր որ զայն Քիլեառին թելադրողը ես էի: Այդ յօդուածին նկատմամբ գիտողութիւններ ունեցողները զանոնք ինծի ուղղելու էին, եւ ոչ

թէ Քիլեառին: Խուսափելով, չեմ զիտեր ինչու, ինծի ուղղելէ իր քննադատութիւնը արարքի մը մասին որուն միակ պատասխանատունս ես եմ, Արփիարեան մինչեւ իսկ «Օրոն»ի յօդուածին թարգմանութեան մէջ՝ յապաւած է առաջին մասը ուր անունս կայ յիշուած: Զաւեշտական գուգադիպութեամբ մը՝ Ամերիկայի «Հայրենիք»ին մէջ միեւնոյն վարմունքը գըտայ ինծի նկատմամբ. այդ թերթը ամբողջ յօդուածը հրատարակած է բաց ի այն տողէն որ իմ անունս կը պարունակէ: Ամերիկայի «Հայրենիք»ին պարոնները վարժուած են խեղաթիւրելու, յապաւելու, աւելցնելու, ստելու, կեղծարարելու: Իրենց ընթացքը այս պարագային մէջ տարօրինակ չի թուիր ինծի: Բայց տարօրինակ կը դառնում որ բարեկամ գրադէս մը իմ մէկ արարքս քննադատէ առանց անունս տալու: Եւ ասիկա շատ պատեհ առիթ մը կը համարիմ մէկ քանի խօսք ըսելու համար «Նոր Կեանք»ի խմբագրապետին ու իմ միջեւս որպէս թէ գոյութիւն ունեցող այն տեսակ մը «գաղտնի գաշնակցութեան» վրայ, որուն ծիծաղելի հեքեաթը բոլոր ապուշները, բոլոր ստահակները երեսս ի վեր կը թօթուեն երբ այս կամ այն վէճին մէջ լուրջ փաստ մը չունենան դէմս դնելու:

Թէ գաղափարներու, խառնուածքի, ճշտումներու հիմնական ու ակներեւ տարբերութիւններ գոյութիւն ունին Արփիարեանին ու իմ միջեւ, եւ թէ ոչ մէկ արարքի, ոչ մէկ գործի մէջ, ազգային կամ գրական ոչ մէկ ձեռնարկի մէջ՝ ոչ ինքն իմ վրաս ո եւ է ազդեցութիւն գործած կրնայ ըլլալ, ոչ ալ ես իր վրայ:

ասի բացայայտ ճշմարտութիւն մըն է որոշ տեսնող ու նենգամտութիւնէ զերծ ո եւ է անձի համար : Կը բաւէ աչքի առջեւ բերել իմ գըրական ու աղգային գործունէութիւնս, «Արշալոյսի ձայներ»էն մինչեւ «Անահիտ»ը, եւ Կեչրոնականի դասախօսութիւններէս մինչեւ Թրանսայի մէջ կատարած բանախօսութիւններս, ու միանգամայն նկատի առնել Արփիարեանի գործը՝ իր «Արեւելք»ի «Օ, ուան Կեանք»երէն մինչեւ «Նոր Կեանք»ի առաջնորդողները կամ «Ժամանց»ները, իր Պոլսոյ երեսփոխանական գործունէութիւնէն մինչեւ հիւմակուան յեղափոխական վարիչի իր կեանքը : Մէկ քանի տարրական ընդհանուր կէտերու մէջ տարտամ համախոհութիւնէ մը զատ, «Նոր Կեանք»ի եւ «Անահիտ»ի խմբագրականները շատ հարցերու մէջ տարամէտ են, ինչպէս տարամէտ են եղած Պոլսոյ մէջ մեր երկուքին յողումներուն մեծագոյն մասը : Եւ բաւական անգամներ, «Հայրենիք»ի ինչպէս «Նոր Կեանք»ի, «Ծաղիկ»ի ինչպէս «Անահիտ»ի մէջ, Արփիարեան եւ ես այսինչ կամ այնինչ զաղափարին մէջ անհամախոհութիւննիս արտայայտած ենք հրապարակաւ, ինչ որ մեր գրական բարեկամութեան կապերուն ո եւ է վնաս չէ բերած եւ չէր կրնար բերել, որովհետեւ անիմաստ պիտի ըլլար երեւակայել որ երկու գրողներ՝ միեւնոյն շրջանակին մէջ ապրելնուն համար՝ բացարձակապէս համախոհ ըլլային ամէն բանի վրայ, եւ աններելի պիտի ըլլար որ իրենց տարամտութիւնը քաղաքավար լեզուով մը հրապարակելնին անբարեկամական ընթացք մը նըկատուէր իրենցմէ մէկուն կողմէ : Քիւրտերու մասին իմ կարծիքս իր կարծիքէն ունեցած տարբերութիւնը Արփիարեան կրնար բացէ ի բաց արտայայտել : դրացիի մը պարտէզէն զէպ ի իմ պարտէզօ քար արձակելու այս սխտեմն է որ զատապարտելի կը թուի ինձի :

Պիտի չյամենամ հոս քրդական հարցին վրայ Արփիարեանի տեսութեան արմատական անճշդութիւնը ապացուցանելու : Երբ Լօշտակի Քիւրտերու մասին ուսումնասիրութիւնը աւարտի, մտադիր եմ ընդարձակօրէն պատճառաբանել այդ հարցին վրայ իմ կազմած կարծիքս : առ այժմ սաչափ պիտի ըսեմ, որ բոլոր Քիւրտերը «աւազակ եւ Հայոց թըշնամի» կարծելով (առանց մտածելու որ նոյն իսկ «Նոր Կեանք»ին մէջ «Ալտեպարան» յօդուած մը հրատարակած է Քիւրտերու մէկ ստուար մասին հայացել ըլլալն հաստատող), Քիւրտերու հետ Հայոց համար ո եւ է համա-

ճայնութիւն անհնար կարծելով (եւ այսպէս հակասելով բոլոր հայ գործիչներուն՝ Պրիմեանէն Փորթուքալեան, Բաֆֆիէն Աւետիսեան), երկու տարիէ ի վեր անյողողոզաբար Սուլթանին զէմ պայքար վարող եւ մշտական բերդարգելութեան դատապարտուած Ապալուրանման մը նոյնացնելով ոճրագործ ու խաբեբայ Օսմանի մը հետ, եւ աշխարհահռչակ ու բոլոր Հայաստանցիներէն յարգուած Պետրեան մը աւազակապետ Մուսային հետ բաղդատելով, Արփիարեան շքեղ ապացոյց մը կուտայ անդուգական թեթեւամտութեան եւ անպարագիծ տգիտութեան սահմուկեցնող շեղջակոյտի մը :

Քրդական հարցին մէջ Արփիարեանի տեսութեանց պատասխանելու համար չէ սակայն, կը կրկնեմ, որ այս յօդուածը կը գրեմ : Կ'ուզեմ այդ միջադէպին առիթով ցոյց տալ թէ ամէն բանի մէջ Արփիարեանի ու իմ միջեւ անբարեկամ ժամայնութեան մը, տեսական ու գիտակից զործակցութեան մը գրոյցը ամենէն ախմար առասպելներէն մէկն է որ մեր մէջ պորտած ըլլան : այս կէտը կ'ուզեմ վերջնականապէս լուսաբանել, ոչ թէ լուծելու համար ո եւ է անձնական խնդիր որ գոյութիւն չունի, այլ հիմէն քաջքայելու համար այն ապուշ ստութիւնը որով բոլոր նենգամիտները մինչեւ յարգ կը յամառին յայտարարել թէ յեղափոխական-գործիչ Արփիարեանին պաշտօնակիցներէն մէկն եմ ես, այսինքն վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան անդամ մը, եւ թէ զինքը եթէ պաշտպանած եմ իր ամբաստանողներուն զէմ՝ այդ բանն ըրած եմ զիս իրեն հետ կապող «գործի կապերէս» մշուած : կուսակցութեան մը անգամ ըլլալը անպատուարեր համարելէ հետեւ եմ ընդհակառակն, ես առաջինը պիտի ըլլայի յայտարարող որ բոլոր Հայերը պէտք է անգամ ըլլան հայրենասիրական կուսակցութեան մը, եթէ գոյութիւն ունենար մեր մէջ կուսակցութիւն մը, այն ծրագրով ու գործունէութեան եղանակով զոր կ'երազեմ : Միայն թէ, պարզ իրողութիւններն են որ ոչ Գրօշակեան, ոչ Հընչակեան կուսակցութեան անդամ չեմ եղած երբեք, իմ կատարած աղգային գործունէութեանս ոչ մէկ կէտին մէջ ո եւ է մարմինէ, ո եւ է անձէ աղդեցութիւն մը չեմ կրած կամ թեւադրութիւն մը չեմ ընդունած : գործած եմ այնպէս ինչպէս որ հարկաւոր եմ դատած, եւ իմ հոգեկան գոհացմանս միակ նպատակին համար : իմ անկախութիւնս, զոր այնքան կը սիրեմ որքան կը բաղձամ անկախութիւն իմ ազգիս համար, երբեք պիտի չթոյլարեմ որ ամենափոքրիկ անկախութեան ինքնապահուիլու համար այս կէտը կը բաւէ որ մէկ քանի ընդհանուր գծով բարագրեմ պատմութիւնը այն բոլոր գրական ու աղգային կեանքի յարաբերութիւններուն զոր ունեցած եմ Արփիարեանին հետ :

\*\*\*

Այն ամբողջ գործունէութեան մէջ զոր ունեցած եւ Պոլիս, չեմ գիտեր անձ մը որ իր ձգտումներովը, մտահոգութիւններովն ու կեանքի եղանակովը այնչափ իմ հակոտնեաս կազմած ըլլայ որքան Արփիարեանը: Հեղինակ մըն էր ան, գեղարուեստը կ'ատէր, գրականութեան մէջ «օգտակար»ը միայն կը փնտռէր, ազգային կեանքը իրեն համար ամբողջ կեանքն էր, աշխարհաբարը սոցալոգիանու համար անհրաժեշտ կը նկատէր գրաբարին քի ին խնդալ, եւ խանդավառ մըն էի, ուրիշ ոչինչ կը սիրէի բաց ի գեղարուեստէն, դրականութիւնը ոչ թէ օգտակարի այլ գեղեցիկ աղբիւր մը կը նկատէի, ազգային խնդիրներով չէի հետաքրքրուեր, կեանքը մեծ բանաստեղծներու գրքերուն մէջէն միայն կը աննէի, ու աշխարհաբարը սիրելիս զիս չէր արգիլեր գրաբարը սոցալոգի: Բայց ինձմէ այդքան տարբեր այդ անձին համար՝ յարկանք կը զգայի, որովհետեւ տոկուն ու գործօն ուժ մը կը ներկայացնէր, եւ որովհետեւ արդէն անձ մը յարգելու համար երբեք չեմ պահանջած որ այդ անձն ինձի ամէն կերպով համախոհ ու համազգաց ըլլայ: Երբ կեղծունակներն ելլելէս քիչ յետոյ, Արփիարեան ինձի առաջարկեց խմբագրական պաշտօն մը ընդունիլ «Հայրենիք»ին մէջ զոր Շահնազար եւ ինքը իրենց տնօրէնութեամբ մտադիր էին հրատարակել, սիրով ընդունեցայ այդ առաջարկութիւնը՝ հակառակ բնազգական խորին հակադրութեանը զոր իմ «գրքի գրականութեան» փարած խառնուածքս կը պարզ «լրագրական գործունէութեան» համար: Տպաւորութիւնները զոր պահած եւ «Հայրենիք»ի խմբագրութեան մէջ անցուցած այդ հինգ վեց ամիսներէս, — տպաւորութիւններ որոնք կըրկնուած ու շեշտուած են այնուհետեւ «Հայրենիք»ի չորս տարուան աշխատակցութեանս միջոցին եւ անկից ի վեր՝ Արփիարեանի հետ ունեցած անձնական յարաբերութիւններէս, ախորժելի յիշատակներուս կարգը չեն կրնար գրուիլ:

Շատ ուշ իմ բայց շատ միակողմանի ու հապճեպ զարգացում ունեցող մարդ մը, չանկեան ու վատլուուն բայց էականապէս թեթեւ ու շար խառնուածք մը, անա ինչպէս կը ներկայանայ ինձի Արփիարեան տասը տարուան յիշատակներուս մէջէն: «Հայրենիք»ի խմբագրատան մէջ շարաթ մը պաշտօնակցութեան յետոյ երկուքս ալ հասկցանք որ մաքի, հողի ու եւ է մտերմութիւն անհնարին էր մեր երկուքին

միջեւ: Արփիարեան չէր կրնար ըմբռնել որ տնտեսական խորհուրդին ասենադպիրովը կամ Հիւանգանոցի հոգաբարձութեան ասենապետովը չհետաքրքրուէի, եւ արեւմտարեանքի ծաղք մը ունէր չրթունքներուն վրայ երբ ձեռքս «Մեքիւս աը Փրանս»ի թիւ մը, Եսքիլէսի հատոր մը կամ Վեոլէնի գիրք մը նշմարէր, — փո՛ւճ բաներ՝ իրեն համար: Խնդալէն կը մարէր իմանալով որ խմբագրատունէն ստացած վտիտ ամսականիս երեք քառորդը Բերայի Փրանսական թատրոնին ու իտալական օքերային ներկայացուցիչներուն կը մատչէի («Ի՞նչպէս կարելի էր երթալ երկու խենթ կնկան պուշտուքը մտիկ ընելու համար դրամ կորսնցընել...»): ու բոլոր իմ զուտ գրական արտադրութիւններս — բանաստեղծութիւններ, արձակ քերթուածներ, սոսկերներ, եւ ամէն ինչ որ կը բերէի մեր գրականութեան մէջ՝ տիրող օգտապաշտ ուղղութիւնէն ու իրապաշտ գեղեցկագիտութիւնէն ու համայնատարած «ազգային ինքնութիւնէն» տարբեր, — հեղինակեան բառերով կ'ընդունուէին իրմէ, հեղինակեան մը որ զիս շատ չէր զարմացներ եւ նոյն իսկ չէր վերաբերէր զիս, որովհետեւ Արփիարեանին անհասկացողութիւնը բնական ու գեղեցկագիտական դատաստանը կարեւորութեան զուրկ կը նկատէի, եւ որովհետեւ Արփիարեանի անձէն աւելի «Հայրենիք»ի տունը աչքիս առջեւ ունէի, միակ տունը Պոլսոյ մէջ ուր ամենէն աղատ, ամենէն գեղեցիկ, ամենէն կենսական գործը կատարելու բաղձանքը գոյութիւն ունէր, եւ ուր կային Յովհաննէս Շահնազարն ու Լեւոն Բաշալեանը, երկու ճապուկ ու զարգացած մաքեր, որ թէպէտ ինձմէ հիմնապէս տարբեր՝ կալմուածքով ու դաստիարակութեամբ, իրենց ոլորտէն զուրս եղածները հասկնալու կարողութիւնն ունէին, ամէն ճամբու մէջ ամէն գեղեցիկ բաներու համար խանդաւառուելու ատակ էին եւ միակ անձերը եղած են այդ տանը մէջ՝ որոնց հետ գրական, գեղեցկագիտական կամ ընկերական նիւթերու վրայ գաղափարի փոխանակութեան հաճոյքն ունեցած ըլլամ:

Մտաւորական այս տարբերութիւններուն կը միանային նկարագրի տարբերութիւններ: Արփիարեան ամենէն վատեցնող, ամենէն կծու, ամենէն պաղ ընդունելութիւնը կ'ընէր սկսնակներուն, խանդով ու բնականաբար միամտութեամբ գեւ պաշտուած նորեկներուն՝ երբ իրեն ներկայանային խրախոյսի խօսք մը, ճամ-

բայ ցուցնող խորհուրդ մը լսելու յոյսով մի-  
 այն Բաշալեանը այս ընդհանուր կանոնին մէջ  
 բացառութիւն կազմած է . քիչ շատ տոկոսն  
 ու իրականապէս ինքնատիպ խառնուածք մը  
 չունեցողը դատապարտուած էր ջնջուելու :  
 խաթարուելու՝ այդպիսի առաջնորդի մը մօտ :  
 Ինծի հետ իր լեզուութիւնը քաղաքավար եւ  
 զգուշաւոր եղած է անշուշտ , որովհետեւ երբ  
 իր քով գացի , արդէն ծանօթ գրագէտի պզտիկ  
 համբաւ մը ունէի՝ «Արեւելք»ի ու «Մասիս»ի  
 մէջ հրատարակած մէկ քանի էջերովս կաղ-  
 մուած : Բայց երբ առաջին դիրքս, «Արշալոյսի  
 Ձայներ»ը հրատարակեցի , Արփիարեան անոր  
 քննադատական մը նուիրեց , ուր գրքին մէջ  
 դատուածէն աւելի չգտնուածովը կը զբաղէր ,  
 եւ ուր պատրիարքի, կաթողիկոսի խնդիրներու  
 անգիտակութիւնս մատնանիչ կ'ընէր՝ զիս  
 ներկայացնելով իբրեւ «կապոյտին» մէջ կոր-  
 սուած երազող մանկիկ մը , մինչդեռ լուրջ ու  
 բազմակողմանի միտք մը այդ գրքին մէջ ու-  
 ըիչ բան պիտի գտնէր ի վեր հանելու — Ինչ  
 որ Պ. Գառնիկ Ֆրանքլեան ըրաւ «Արեւելք»ի  
 մէջ հրատարակուած ուսումնասիրութեամբ մը :  
 Կը յիշեմ սակայն իր վարմունքը , ա՛լ բոլոր-  
 րովին անվերապահ , Պ. Շաքլեանին հետ որ  
 ինձմէ յետոյ քիչ մը ատեն «Հայրենիք»ի մէջ  
 խմբագրական պաշտօն վարեց . «սէրսէմ»ի ,  
 «սարսախ»ի պէս զգուական բառեր ունէր այդ  
 երազկոտ ու ինքնամիտի տղուն համար , որ  
 թէպէտ արդէն իրմէ շատ աւելի «գրագէտ» ,  
 թուղթ մը առնել մոռցած կամ փորձ մը գէշ  
 սրբադրած ըլլալու շատ հասկանալի ու սիրուն  
 յանցանքը կրնար երբեմն գործած ըլլալ : Սկզբ-  
 նակներուն ցոյց տուած իր այդ վարմունքը  
 յաճախ իր աշխատակիցներէն ոմանց ալ չէր  
 քաշուեր հրամցնելէ . տասը հոգիի մէջ , աշ-  
 խատակցի մը մէկ յօդուածին փորձերը առ-  
 ջեւը բերել կուտար , «Սա \*\*\* ին գրածը բերէք  
 սրբագրեմ» ըսելով : Սխալեցայ Բաշալեանը  
 միակ բացառութիւնը համարելով , ուրիշ սկզբ-  
 նակ մըն ալ կրցաւ գտնուել որ այս իր դե-  
 րազանցութեանը համոզմունքին մէջ խարբս-  
 խուած ու իր արհամարհանքին մէջ անագահ  
 դրողին քով յաջողեցաւ շնորհ գտնել , «Հայ-  
 րենիք»ին Օգիմզան, սիրունիկ վազվատան մու-  
 կի մը նմանող պզտիկ բարակ տղայ մը որ  
 Գէորգեան ձեռարանէն կուզար Պոլիս , քիչ շատ  
 ուշիմ ու բաւական կոկիկ լեզուով մը «ազգա-  
 յին» յօդուածներ շարկ տող համակրելի տիրա-  
 ցու մը : Արփիարեան կը զուրգուրար , կը

իենթեար, կը սքանչանար անոր վրայ . «Ի՛նչ  
 լուրջ , ի՛նչ կորովի , ի՛նչ պատրաստուած  
 գրագէտ , կը բացազանչէր , կովկասի մէջ  
 միայն ասանկ դատարակութիւն կրնար ստա-  
 նալ մեր հոստաները» . Օգիմզա ամէն օր խըմ-  
 բագրատունն էր . Արփիարեան զայն ժամերով  
 իր քովը կը պահէր, ու իրենց խորհրդաւոր  
 տեսակցութիւններուն մէջ ազգին բաղբը կը  
 վճռէին մէկտեղ . . . : Հիմա Օգիմզա , Պոսթոնի  
 Հայրենիք»ին Վոսմեանը , ամենէն ոխերիմ  
 թշնամիներէն մէկն է Արփիարեանի :

Ուրիշ կէտ մը որ ինծի անախորժ կը թուէր  
 Արփիարեանի նկարագրին մէջ , իր հրապար-  
 կագրական գործունէութեան մէջ յաճախ «անձ-  
 նական» ատելութենէ մղուելու ձգտումն էր .  
 հաստատութեան մը , գործի մը վրայ ան-  
 կողմնակալ ու բարձրահայեաց քննադատու-  
 թիւն մը ընելու տեղ , Արփիարեան շատ ան-  
 դամ «անձ մը կճնելու» փափաքը ցոյց կուտար .  
 առոր համար է որ իր քրոնիկները միշտ աղ-  
 մուկ կը հանէին , բայց շատ քիչ անգամ իրա-  
 կան արդիւնք մը արտադրած են . անձերու դէմ  
 մոլեգնող հեղուցութիւն մը կը զուարճացնէ ,  
 կը կատղեցնէ , կը յուզէ , բայց չի խոնարհե-  
 ցըներ հանրային կարծիքը եւ քանդածին տեղը  
 դրուելու համար շինուելիքը չի պատրաստեր :  
 Ատով կը բացատրուի յաջողութիւնը գոր գտան  
 Շահնազարի առաջնորդողները , որոնք «Հայ-  
 րենիք»ի վերջին տարիներուն մէջ այդ թեր-  
 թին ամենէն ազդեցիկ ու օգտակար յօդուած-  
 ներն էին եւ Շահնազարը Հայոց մեծագոյն հը-  
 րապարակագիրը նկատել տուին ամենուն , ու  
 ըրովհետեւ Շահնազար լուրջ , ազնիւ ու խու-  
 ըրապէս համոզուած էր իր յարձակումներուն  
 մէջ եւ այդ յարձակումները կ'ուզէր երբեք  
 անհասնելու սոսկական անձին դէմ , այլ հաս-  
 տատութիւններու , ձգտումներու , ուղղութիւն-  
 ներու , բարքերու դէմ :

Աւարտելու համար այս պատմութիւնը Պոլ-  
 սոյ մէջ Արփիարեանի հետ իմ ունեցած յարա-  
 բերութեանցս , պէտք է ըսեմ որ իր թերթին  
 կողմէ կէսը չեմ գտած այն անձնուիրութեան  
 ու գորովին զոր ես անոր նկատմամբ միշտ  
 ցոյց տուած եմ : Երբ Բաշալեան Բարիզէն դար-  
 ձաւ «Հայրենիք»ի խմբագրութեան մէջ մըտ-  
 նելու համար , Արփիարեան անոր հասած օրն  
 իսկ ինծի իմացուց , անկիրթ ու կատակա-  
 խառն ոճով մը , որ ուրիշ տեղ գործ մը փընտը-  
 ուէի , — թէպէտ եւ զիս «Հայրենիք»ին աշխա-  
 տակցութեան հրաւիրելով ինծի կորսնցնել

տուած էր կեդրոնականի խնամակալութեան օգնութեամբ Բարիզ կրթալու եւ դրական ուսումնասիրութիւններ ընելու յոյսս : Եւ երբ հանդէս մը , — «Մաղիկ»ը , — հրատարակել սկսայ , Արփիարեան ու իր աշխատակիցները ոչ մէկ յօդուած չուղեցին տալ իմ թերթիս , ու մինչեւ անգամ առաջին թիւը երեւցած օրը՝ թերթիս ազդը չտպագրեցին «Հայրենիք»ին մէջ (մինչդեռ «Արեւելք»ը որ ինծի հաշակիր էր , տպագրեց զայն) : Եւ Արփիարեան առաջնորդող մը հրատարակեց ուր մէկ քանի փաղաքշական վերադիրներու մէջ կը ջանար պղտիկցնել իմ հիմնած գործիս նըշանակութիւնը՝ զայն ներկայացնելով իբրեւ սկանալներու ժամագրավայր մը , մինչդեռ մը նպատակ էր ստեղծել «հանդէս» մը , որուն մէջ մեր զրոյները , հին կամ նոր , ընդարձակ ուսումնասիրութիւններ կարենային հրատարակել եւ աւելի խնամքով մշակէին արուեստի գրականութիւնը , ինչ որ անօրեայ թերթի մը մէջ անբաւական կերպով կրնար իրագործուիլ : Եւ Արփիարեան այս ընթացքը կ'ուսննար , հակառակ որ գիտէր թէ «Մաղիկ»ը հիմնելով բնաւ դձուձ նպատակը չունէի «Հայրենիք»ին դէմ օրկան մը կանգնելու , քանի որ ծրագրիս բոլորովին տարբեր էր «Հայրենիք»ին ծրագրէն , եւ քանի որ զատ թերթ մը հիմնելու որոշումէս առաջ՝ «Հայրենիք»ի խմբագրութեան առաջարկած էի որ ինծի թոյլ տային միեւնոյն գործը կատարել «Հայրենիք»ի կիսամսեայ գրական յաւելումով մը ձեւով :

\* \*

Ասոնք են իմ «կապեր» այն մարդուն հետ , որուն ամենէն ջերմ պաշտպանը եղայ երբ իր ամենէն աւելի սիրած մէկ քանի բարեկամները զինքը դաւածան հոշակեցին :

Չեմ պարծենար ատով , եւ ասպետի մը ձեւերը չեմ ուղեր առնել : Ատով ուրիշ բան չըրի բայց թէ պարտք մը կատարել իմ խղճիս առջեւ : Անձ մը չէր որ կը պաշտպանէի , այլ գաղափար մը , սկզբունք մը : Միայն թէ հիմա ամէն ոք կ'ըմբռնէ ո՛րքան ծիծաղելի կը թուին ինծի այն բոլոր մեծ կամ փոքր աւանակները որոնք կ'երեւակային թէ Արփիարեանը պաշտպանած եմ՝ իրեն հետ ունեցած «կապերէս» մզուած , այսինքն իրմէ տեսած բարիքներէս պարտաւորուած (!) :

Շատ ալ չեմ զարմանար որ մեր մէջ շա-

տերուն բնական թուած ըլլայ երեւակայել որ Արփիարեանին պէս խորապէս վտանգուած եւ ամէն կողմէ յարձակումներով պաշարուած գործիչ մը պաշտպանելու յամառիւս անձնական կապերու եւ պարտաւորութիւններու արդիւնք պէտք էր ըլլար , որովհետեւ մեր աղտոտ բարքերուն մէջ՝ ուր հարուածեալ բարեկամ մը կը պաշտպանեն միմիայն երբ ստիպողական շահ մը ունին այդպէս ընելու , եւ շահ չունեցած ատենին՝ զուարճացող հանդիսատեսի դիրքը կամ զօրեղագոյն թուող թշնամիին կողմը անցնելու որոշումը կը նախընտրեն , իմ այս ընթացքս անշուշտ անհասկանալի պիտի թուէր առանց այդ ենթադրութեան :

Արդէն շահեկանութենէ զուրկ չէ յիշատակել այստեղ այն պարագաները որոնց մէջ առաջին բողոքի ձայնը բարձրացուցի Արփիարեանն ամբաստանողներուն դէմ :

«Մաղիկ»ը նոր սկսած էի հրատարակել : Արփիարեանի չարասնիտ յօդուածը , զեռ նոր երեւցած , զիս իրեն նկատմամբ խանդակաթղգացմանց մղելու բնութիւնը չունէր : Բայց երկդիմի յօդուած մը հրատարակելուն համար , մտքէս չէի անցուցած Արփիարեանին ու «Հայրենիք»ին դէմ յարձակումներ սկսիլ «Մաղիկ»ին մէջ , հակառակ ջանքերուն Գաշնակցութեան ներկայացուցիչ Պ. Իւսուֆեանին որ կ'ուղէր զիս «Հայրենիք»ին հետ թշնամի դարձնել : Հարկ եղած գիտողութիւնը ըրի անձնապէս Արփիարեանին , «Մաղիկ»ին մէջ բառ մը չնուիրեցի այդ խնդրոյն որ իմ մտահոգութեանցս մէջ շատ աննշան տեղ մը կը բռնէր , ու շարունակեցի գործս , որ «Հայրենիք»ով զբաղելէ բոլորովին տարբեր նպատակ ունէր :

«Հայրենիք»ը անթերի եւ անսպիւտ չէր անշուշտ . այդ թերթին մէջ կը յայտնուէին երբեմն գաղափարներ որոնց համախոհ չէի . թերթին խմբագրութիւնը կ'ուսննար երբեմն վարմունքներ զոր գատապարտելի կը նկատէի , ինչպէս այն անփափուկ վարմունքը զոր ունեցաւ իր աշխատակիցներէն մէկուն՝ Տիգրան Կամսարականին հանդէպ : Բայց հակառակ այդ ամենուն , «Հայրենիք»ը Պոլսոյ Հայոց մտաւորական կեանքին մէջ միակ հաստատութիւնն էր , Կեդրոնական վարժարանին հետ , որ յարգանքի ու համակրութեան արժանի ըլլար : Այդ թերթը յեղաշրջում մը բերած էր Տաճկահայոց բարքերուն , ձղտումներուն , գրականութեան ու լեզուին մէջ , եւ մոլեգին ու դժնդակ պայքարը , զոր առանց վախնալու գրաքննութեան ու ոստիկանութեան հալածանքէն ու բազմապատիկ երկարատեւ զաղարումներէն ,

ան մղեց մեր կֆէնտիններուն, քապոթեններուն ու տիրացուներուն դէմ, տաճկահայ հասարակութեան մեծագոյն փառքի տիրադոսներէն մէկը կը կազմէր : Հանրութեան բարիքը անձնական պղտիկ նկատումներէ վեր դնող ո եւ է մարդու համար , պարտք մը կար մանրամասնութեան անհամաձայնութիւնները , անհատական վերաւորումները տանը չորս պատին մէջ անցած վէճերով կարգադրել ու աղմուկ հանելու , գայթակղութիւն մը յարուցանելու կամ ռիսի յազեցում մը գտնելու հաճոյքին համար չպատակաւորել այդ տանը հետ ու չտրկարացնել անոր վարկը, որ մեծ էր ժողովրդին մէջ եւ , հիմնուած ըլլալով ազիւ սկզբունքներու եւ արի գործունէութեան մը վրայ , օգտակար ու թանկագին ուժ մը կը կազմէր :

Այս տեսակէտով էր որ Դաշնակցականներու կողմէ յարուցուած «մատնիչ»ի խնդրէն առաջ, երբ Զօհրապ-ւ Հայրենիք» կոչուր երեւան եկաւ, Զօհրապին ընթացքը աններելի համարեցայ. Զօհրապ ամենէն հին բարեկամներէն մէկն էր Արփիարեանի եւ Բաշալեանի , «Հայրենիք»ի գրական կարեւորագոյն աշխատակիցներէն մէկն էր եղած . տանը մարդերէն մէկն էր՝ վերջապէս . եւ յանկարծ իր «Մասիս»ին մէջ կը հրատարակէր յօդուած մը , ուր ոչ թէ կը փորձէր անաչառ բարեկամի ոճով մը քննադատել «Հայրենիք»ի թերի կողմերը , այլ զայն հիմն ի վեր քանդել կը ձգտէր . եւ «յանկարծ» կ'ըսեմ, որովհետեւ այդ յօդուածը գրելէն շաքաթ մը առաջ դեռ մտերմական յարաբերութիւններ ունէր «Հայրենիք»ի խումբին հետ , ու գաղափարներու շատ ծանր վէճ մը , անհամաձայնութիւն մը չէր գոյութիւն ունեցած իր եւ «Հայրենիք»ին միջեւ . իր ընթացքը այնչափ աններելի երեւցաւ ինծի , որ , շատ լաւ յարաբերութիւններ ունենալով հանդերձ իրեն հետ (ճիշդ այդ միջոցին Զօհրապ ամէն ջանք ըրած եւ հանդէսներու մէջ ոտանաւորներ հրատարակելու ջնջուած արտօնութիւնը վերստացած էր գրաքննութենէն՝ մասնաւորապէս իմ ոտանաւորներս «Մասիս»ի մէջ հրատարակելու համար) զգացած տպաւորութիւնս իրեն յայտնեցի անվերապահ ու գրեթէ բիրտ բռնելով եւ կապերս խզեցի իրեն հետ :

Մատնիչի խնդիրը հրապարարակ ինկաւ այնպիսի պայմաններու մէջ եւ այնպիսի եղանակով մը որ Արփիարեանի ամենէն կատաղի

հակառակորդներն անգամ , բաւական է որ պարկեշտ մարդիկ ըլլային, մղում ու նոյն խակ պարտականութիւն ստիպուած էին զգալ Արփիարեանը պաշտպանելու :

Մատնիչի խնդրոյն զլխաւոր հեղինակներէն մին եւ անոր ամենէն ետանդուն տարածիչը «Հրանդ»ն էր . եւ ասի , ինծի համար , բաւական էր որպէսզի կասկած ունենայի այդ ամբաստանութեան լրջութեանը վրայ , որովհետեւ ասիթ ունեցած էի շատ մօտէն ճանչնալու «Հրանդ»ին նկարագիրը : «Ծաղիկ»ը , հիմնած ատենս խոստացած էր աշխատակցիլ . երբ առաջին թիւը պատրաստելու վրայ էի , չկատարեց իր խոստումը . յետոյ , ամչնալով իր կեղերոնականի աշակերտներէն որոնք «Ծաղիկ»ը կեղերոնականին թերթը կը նկատէին , ստիպուեցաւ յօդուած մը բերել , ստանուններու վրայ ողորմելի բան մը , զոր պիտի չհրատարակէի եթէ սկսնակէ մը ստորագրուած ըլլար . այդ յօդուածին հրատարակումէն յետոյ , երեւակայիւր էր որ «Ծաղիկ»ը մէկ քանի հարիւր նոր բաժանորդ ունեցած ըլլալու էր եւ շաքաթը երեք անգամ կուգար «Ծաղիկ»ի խմբագրատունը ինքզինքը ճաշի հրաւիրելու : Յետոյ , օր մըն ալ կեղերոնականին մէջ ինծի յայտնեց որ իր աշխատակցութիւնը այն ատեն միայն պիտի կարենար շարունակել «Ծաղիկ»ին երբ յօժարէի ընդունիլ պայման մը զոր կ'առաջարկէր , այն է «Ծաղիկ»ը «Հայրենիք»ի դէմ պայքարի թերթ մը դարձնել . երբեք չպիտի մոռնամ այդ գուհիկ ու ծիծաղելի մարդուկին հետ այդ օրը ունեցած տեսարանըս : «Հայրենիք»ով փարա՛ կը վաստկին կոր , կը գոչէր կաս-կարմիր եղած , անաղին փարա կը վաստկին կոր ու Սբլանտիտին մէջ կ'ուտեն կոր , ու մեզի չեն ի տար կոր . յարձակինք իրենց վրայ , կոտրենք այդ թերթին վարկը որ խախտած է արդէն , «Ծաղիկ»ը «Հայրենիք»ին տեղը պիտի բռնէ , եւ հազարաւոր բաժանորդներ պիտի ունենանք . բոլոր Դաշնակցականները մեզի հետ պիտի ըլլան . . . . . Եթէ պայմանս ընդունիս , կը պնդէր , մէկ քանի հզօր աշխատակիցներ կը բերեմ քեզի , աշխատակիցներ որոնք իմ մէկ խօսքիս կը սպասեն «Ծաղիկ»ին նկատմամբ իրենց ընթացքը վճռելու համար» . այդ հզօր աշխատակիցներէն մէկը Օգիմզան էր . . . . . Եւ թուղթ մը ձեռքը բռնած , կը պաղատէր , կը ստիպէր , կը սպառնար , «քոնթրա՛թ մը , կ'աղաղակէր , քոնթրա՛թ ընենք , հոս , առանց վայրկեան մը կորսնցնելու » : Մեք ժեցի

այդ ազտոտ հաշիւին մարդը ըլլալ , ըսի իրեն որ «Մաղիկ»ը զրամ վաստկելու համար չէի հիմնած, եւ յայտնեցի իրեն որ կը նախընտրէի վաղ անցնիլ իր հրաշագործ աշխատակցութենէն : Այդ օրէն մէկ կամ երկու ամիս յետոյ էր որ մատնիչի պատմութիւնը մէջտեղ նետուեցաւ : Այդ խնդրոյն ծագումէն տակաւին վեց ամիս առաջ Հրանդ երկու երեք անգամ գժտուած էր Արփիարեանի հետ՝ բոլորովին անձնական ճշգրտութիւն վէճերու պատճառով եւ յետոյ զարձեւել եկած էր «Հայրենիք»ին աշխատակցիլ . նոյն իսկ այն միջոցին ուր ինծի կ'առաջարկէր «Մաղիկ»ին մէջ «Հայրենիք»ին դէմ պատերազմ յայտարարել, կապերը չէր խզած «Հայրենիք»ի խմբագրութեան հետ . վերջին պահուն , վերջին վէճ մը ունեցած էր Արփիարեանի հետ , լզրճուկ խնդրոյ մը առթիւ . Հրանդ կ'ուզէր որ «Հայրենիք»ին մէջ ազդը տպէն սիֆիլիզի մասին գրքոյկի մը որուն հեղինակն էր Թիւթիւն-ճիւղի լրտեսը : Արփիարեան մերժած էր հրատարակել լրտեսի մը ազդը . ատկից շարքի մը յետոյ , Հրանդ զրոյց հանեց թէ Թիւթիւն-ճիւղի միջոցով ձեռք ձգած է Արփիարեանի հարցաքննութեան թղթերը, որոնք կ'ապացուցանէին թէ Արփիարեան մասնած ըլլայ վ. Տատեանը, Տր. Թիւթեանը , եւն. Եւ ասիկա բաւեց որպէսզի մեր հասարակութիւնը ամենաստուար մեծամտոնութեամբ հաւատք ընծայէր այս քստմնելի ամբաստանութեան : Բոլոր Դաշնակցականները , եւ անոնց հետ բոլոր տիրացուները , էֆէնտիները , միմոսները , որոնք Արփիարեանի խայթոցը կրած էին , եւ ուրիշներ ալ որոնք Արփիարեանի անախորժութիւնը մը զիջելու բնաւորութիւնը մտէն ճանչցած ու անկից վերաւորուած էին , ամբաստանութեանը ամբաստանութիւն ուժ տուին . ես այդ միջոցին «Մաղիկ»ովս ու կեղծանակների գասերովս զբաղած , շատ քիչ անգամ կ'երթայի «Հայրենիք»ի խմբագրատունը , այն ալ գրեթէ միմիայն Շահնազարն ու Բաշալեանը տեսնելու համար : Արփիարեանի հետ ճիշդ այդ օրերը հրապարակային հակաճառութիւն մըն ալ ունեցած էի Նարեկացիի խնդրոյ մը առթիւ . իրեն հետ յարաբերութիւններս բոլորովին պազ էին : Երբ սակայն իմացայ զրոյցը որ կը ձգտէր մրտտել Արփիարեանը , զուանքով բողոքեցի զայն հրապարակ հանոյններուն դէմ : Հակառակ իր բոլոր թերութիւններուն , այդ մարդը մեր մէջ ամենէն նշանակալից դերերէն մէկը կատարած էր . Միացեալ Ընկերու-

թեանց զլիաւոր հիմնադիրներէն մէկը եւ «Մըշակ»ի «Հայկակ»ը եղած էր , երեսօթանական ժողովին մէջ էֆէնտիներու կուսակցութեան դէմ յանդուզն պայքար մը մղած էր , «Արեւելք»ի եւ «Մասիս»ի իր յողուածներովը մեր մամուլը եւ մեր դրականութիւնը վերանորոգողներէն մէկն եղած էր , եւ Շահնազարին հետ՝ հիմնողն եղած էր «Հայրենիք»ին . անհուն ցաւ մը զգացի երբ տեսայ որ մեր ժողովուրդը , աններելի դիւրահաւանութեամբ մը , բնական կը զանէր որ քսան տարի իր բացարձակ համակրանքը վայելած ու այս բոլոր գործունէութիւնը կատարած մարդ մը դիտակից դաւաճան մը վարձուած լրտես մը կրնար ըլլալ . ցաւ զգացի , որովհետեւ մտածեցի թէ մեր ժողովուրդը խորապէս անբարոյականացած ըլլալու էր ուրիշներէն որ իր ամենէն սիրուած գործիչներէն մէկուն ոճրագործ մը ըլլալուն կարելիութիւնը մէկ օրէն : եւ առանց դժուարութեան կ'ընդունէր : Յետոյ , Արփիարեանին ներքին կեանքը դիտելի բաւական , եւ ան հերիք էր այդ զրոյցը քանդելու համար . ժուժկալ ու պարզուկ կեանք մը կը վարէր , միշտ թափթիած հազուադէպներով միշտ գրպանը պարսպ : եւ իր միակ զուարճութիւնը , միակ հաճոյքը , միակ կիրքը իր ազգային դրական-գործունէութիւնն էր , որուն կը նուիրէր իր բոլոր ժամանակը : Ինչպէս կարելի էր ասոնք համաձայնեցնել Նազիմ փաշային լեցուն ամսական մը առնուլ լրտեսի մը հեքիաթին հետ : Եւ վերջապէս , կէտ մը կար ամենէն աւելի թելադրական . զրոյցը հանողները զայն կ'ուզէին ոչ միայն Արփիարեանի անձին դէմ , այլ ամբողջ «Հայրենիք» լրագրին դէմ , եւ միանգամայն ամբողջ Հնչակեան կուսակցութեան դէմ : Յայտնապէս , կուսակցական նկարու մեկեր կային այդ զրոյցին ետեւը . այդ միջոցին Հնչակեան կուսակցութիւնը միակ ազդեցիկն ու հռչակաւորն էր Տաճկաստանի ինչպէս Եւրոպայի մէջ , եւ մանաւանդ Պոլսոյ մէջ . Պոլսոյ Դաշնակցական գործիչները , մասնաւորապէս Իսուֆեան եւ իր արբանեակները , շատոնց ի վեր առիթ մը կը ցանկային զանել՝ այդ կուսակցութիւնը վարկարեկ ընելու եւ անոր աւերակներուն վրայ Դաշնակցութիւնը բարձրացնելու համար . Արփիարեան ճարպիկ , հնարամիտ ու ինքն ալ կուսակցամուլ , Պոլսոյ Դաշնակցական վարիչները ամենէն աւելի նեղող մարդն էր . միեւնոյն ատեն , «Հայրենիք»ը , որ աւելի ժողովրդականութիւնը զգած եւ զօրութիւն ստացած էր քան . «Դրո-

չակ»ն ու նոյն խօսի «Հնչակ»ը, «Հայրենիք»ը որ Դաշնակցութեան հրաման մը ընդունած էր եւ չէր հպատակած անոր, «Հայրենիք»ը որ Հնչակեան կուսակցութեան համար ամենակարեւոր յենակէտ մըն էր, կը ձանձրացնէր Դաշնակցականները. աղարտելով Արփիարեանը, կ'ուզէին կործանել նաեւ «Հայրենիք»ը եւ Հնչակեան կուսակցութիւնը: Ասոր ճշգրութիւնը ըմբռնելու համար կը բաւէ նկատել այն յամառ մոլիզդութիւնը զոր Դաշնակցականներն այդ միջոցին զրին (եւ մինչեւ ցարդ կը շարունակեն) Արփիարեանին վրայ կեդրոնացնելու «մատնիչ» բառին ամբողջ ծանրութիւնը. Պոլսոյ մէջ Նուրեանի պէս ամէն վայրկեան իր ազգին դէմ դաւաճ սրբկայ մը կար, Քէչեանի պէս ոստիկանութեան միջոցով իր բոլոր ոխերը յագեցնող հրէշ մը կար (եւ կայ մինչեւ հիմա), Վահան վարդապետի պէս չի ու վնասակար արարածներ կային. Դաշնակցութիւնը անոնցմով չէր զբաղեր, կամ բոլորովին անցողակի ուշադրութիւն մը կ'ընծայէր անոնց. միա՛կ մատնիչը, Հայոց խնդրոյն լուծման միա՛կ արգելքը, Արփիարեանն էր (ու մինչեւ ցարդ միեւնոյն ծիծաղելի կացութիւնն է որ կը տիրէ):

Եւ զրոյցը, կը կրկնեմ, լոկ Արփիարեանին դէմ չէր որ կ'ուզողէր. մութ անկիւններու մէջ կը փափայտին թէ Շահնազարն ու Բաշալեանն ալ մեղսակիցներ էին Արփիարեանին. (Դաշնակցութիւնը, Արփիարեանի հետ, Յովհաննէս Շահնազարն ալ մահուան դատապարտած էր, բան մը որ երբեք երեւան չէ ելած բայց որ բացարձակապէս վաւերական է): Եւ ուղուած արգիւնքը ձեռք ձգուեցաւ. ժողովուրդը Արփիարեանին դէմ միայն չէր որ մրմոաց. փողոցներուն մէջ «Հայրենիք»ը պատտեցին «մատնիչի թերթ է, պէտք չէ կարդալ» ըսելով (այս հրէշային բանը կ'ըրջաւ տեղի ունենալ): Պէտք է ըսեմ որ ազնիւ բացառութիւններ գրուեցան. Զօհրապ, Կամսարական, հակառակ Արփիարեանի հետ զօտուած Էլլալուն, լողողեցին այդ զրոյցին դէմ եւ երբ Արփիարեան Դաշնակցականէ մը կանակի հարուած մը ընդունեցաւ, ցաւ ու զայրոյթ յայտնող նամակներ զրկեցին իրեն (այս իրողութիւնը կ'ուշեմ յիշել որպէսզի չկարծուի թէ մեր ժողովուրդը ազնուութեան ամէն հետք կորսնցուցած է):

Այս պայմաններուն մէջ իմ սկզբունքներուս ու նկարագրիս դէմ մեղանչած պիտի ըլլայի ձեռնպահ մնալով: Մոլեղին յոգուած մը զրեցի

«Ծագիկ»ին համար. բայց գրաքննութիւնը, որմէ ծածուկ պահելով «Հայրենիք»ը կ'ըրցած էր մէկ երկու յոգուած հրատարակել այդ խնդրոյն ակնարկող, իստիւ հրաման հանած էր որ այդ նիւթին վրայ այլեւս ոչինչ չգրուի. յոգուած իս հրատարակումը արգելուեցաւ. այն ատեն կեդրոնականի դասերէս մէկը ընդմիջեցի եւ յոգուածս կարդացի աշակերտներուս, որոնց մէջ կային Դաշնակցականներ ու Հնչակեաններ. աշակերտներէս մէկը առաւ յոգուածը եւ դասընդմէջին տարաւ «Հրանդ»ին որ այդ օրը դպրոցը կը գտնուէր. ողորմելին ծայրէ ծայր կարդացած, խեցգետնի գոյն առած եւ առանց բառ մը ըսելու թուղթը աշակերտիս դարցուցած էր:

\* \* \*

Ասոնք են «դրական» կապիւս Արփիարեանին հետ: Կ'անցնիմ «ազգային գործունէութեան կապերուս:

95ի Պոլսոյ ջարդէն է որ կը սկսի իմ մուտքս ազգային գործունէութեան մէջ:

Մինչեւ ջարդը, մտաւորական կեանք մը անցուցած էի, ազգային գործերուն հետուէն միայն հետաքրքրուելով, ու աղղիս հետ կապուած միայն այն սիրովը զոր կը տածէի անոր լեզուին համար ու բաղձանքովը զոր ունէի անոր գլխկան ու բարոյական զարգացումը բարձր աստիճանի մը հասած տեսնելու: Զարդերը զիս ցնցեցին, իմ մեկուսացած զաղափարականի հանդարտութիւնս ամօթալից ու յանցապարտ ցոյց տուին ինծի. կեանքիս ամենէն խորին կերպարանափոխութիւններէն մէկը կրեցի, որուն հոգեբանական վերլուծումը օր մը պիտի ընեմ՝ երբինքզինքս բաւական ծերացած զգամ յիշատակներս պատմել սկսելու համար: Որոշեցի, խկոյն, ընել ինչ որ իմ կարողութիւններս կը ներէին «ուղղակի» ծառայութիւն մը մատուցանելու համար իմ դժբաղդ ազգիս զոր կը խողխողէին, առանց մէկին խորհուրդ հարցնելու, առանց մէկէն պատուէր ընդունելու, զործի սկսայ. Բարիզի մամուլին գրեթէ-հակակրութիւնը Հայոց հանդէպ, զիս կը գայթակղեցնէր ու կ'ապշեցնէր միանգամայն. գիտէի որ Բարիզի մէջ տասնեակներով գրադէտներ կային, որոնք՝ եթէ ճշգրիտ տեղեկութիւններ ստանային՝ անշուշտ Հայոց ի նպաստ

ճախն պիտի բարձրացնէին եւ Ֆրանսայի ու ամբողջ Եւրոպայի մէջ համակրութիւններ պիտի արթնցնէին մեզի համար . մէկ մէկ նամակ գրեցի Տիկին Սեւոթինին , Հանրի Պօէրին , Ռոշֆորին եւ Տալմոնին Պօէր եւ Ռոշֆոր հրատարակած էին նամակս՝ առանց ստորագրութիւնս . դնելու , զայն յօղումով մը մեկնարանկով . Սեւոթին ու Տալմոն , ներշնչուելով նամակէս , լրագրական պայքար մը սկըսած էին Սուլթանիէ կառավարութեանը դէմ : Միեւնոյն ատեն «Ռեվիւ Պլանշ»ը կը հրատարակէր թարգմանութիւնը Լաստիլերտացիին մէկ հատուածին՝ հայկական հին ջարդերուն վրայ՝ զոր զրկեր էի Քիչեառի միջոցով : Զգացի որ ճիգերս ի դերու չէին ելած , ուղեցի շարունակել գործը , որոշեցի թողուլ Պոլիսը , որուն ոճիւրի , վայրենութեան , ցածութեան միջոցաբար ա՛լ կը պփգայնէր զիս եւ հոն ապրելը անհնարին կը դարձնէր ինձի : Ոչ մէկ քոմիթէի հետ կապ չունէի , ոչ մէկ կասկած չկար վրաս , ոչ մէկ վտանգ չկար որ զիս բռնադատէր Պոլսէն փախչիլ . ես իմ կամքովս ուղեցի Պոլսէն ելլել , որովհետեւ կը տեսնէի որ այլեւս հոն մնալ ու լեղուին ու գրականութեան դարգացումովն զբաղելը անիմաստ , գրեթէ անազնիւ բան մը պիտի ըլլար՝ երբ ազգս տանջարանի վրայ կը քաշկռտէին : Ես իմ ձեռքովս գաղթեցուցի «Մաղիկ»ի հրատարակումը , եւ որոշեցի մեկնիլ Բարիզ՝ ուր կը զբայի որ բան մը կրնայի ընել , որչափ ալ մանրադիտական ըլլար ընել կրցածս՝ ազգային պահանջներուն քով : Այդ միջոցին էր որ իրիկուն մը Արփիարեանին յայանեցի ծրագրիս : Արփիարեան , իր վերջին քրոնիկներէն մէկուն մէջ , այդ միջոցէպը անձիչէ կերպով պատմած էր . ինքը չէ որ ինձի յորդորած է Բարիզ գալ եւ այս գործին նուիրուիլ . ինքը եւ «Հայրենիք»ի միւս գրողները կարգացած էին Բարիզի մամուլին մէջ երեւցած պոլսական նամակները , եւ չէին դուշակած հեղինակը , թէպէտ ոճս բաւական անձնակաւն էր զիս մտանուլու համար եւ Բարիզի ընկերներս գծուարութիւն չէին քաշած հեղինակին ով ըլլալն հասկընալու : Սօսքը այդ նամակներէն մէկուն վրայ գալով , չուղեցի այլեւս ծածկել գաղթնիքը , եւ յայտնեցի իրեն որոշումս : Ըսի միանգամայն թէ ճամբու ծախք մը եւ քանի մը ամսուան ապրուստի միջոց մը կը փախաքէի գտնել՝ որոշումս անմիջապէս գործադրելու համար : Հսկասակ ի ծնէ հեզնող մը ըլլալուն ,

Արփիարեան խանդավառութիւններ ունենալու կարող է , խանդավառութիւններ որոնք սակայն շատ կարճ կը տևեն : «Ես անպատճառ կը գտնեմ պէտք եղած դրամը , ըսաւ ա իւնոտ չեշտով մը , վաղը անպատճառ պատասխանը կուտամ» . երկրորդ օրը հետեւեալ նշանաւոր , պատմական մնալու արժանի վճիռը արձակեց . «Սորհրդակցեցայ ընկերներուս հետ . ըսին . թէ աւելորդ է հիմա Բարիզ մարդ զրկել , քանի որ շաբաթէ մը հայկական խնդիրը կը լուծուի . . . » : Այն ատեն , աշակերտներէս մէկուն միջոցով , ուղեցի զիտնալ որ Դաշնակցականները կը հաւանէի՞ն ճամբու ծախք մը ճարել ինձի . աշակերտս պատասխան բերաւ թէ Դաշնակցականները մամուլի , յօղումներու եւ այգօրինակ փուճ բաներու համար զբրամ չէին ուղեր մտել . . . : Բարեկամ մը գտայ վերջապէս որ քանի մը հարիւր ֆրանք փոխ տուաւ ինձի , ու շողենաւ նետուեցայ : Մեկնած օրս , Արփիարեան եկաւ զիս տեսնել եւ ինձի յանձնարարեց որ յարաբերութեան մտնեմ Նազարբէկին հետ , մանաւանդ Տիկին Նազարբէկին հետ . «Տիկին Նազարբէկը հանճար մըն է , ան է որ կը վարէ ամբողջ կուսակցութիւնը» , ըսաւ՝ առանց խնդալու , շատ լուրջ , նոյն իսկ խանդոտ չեշտով մը : Պոլիս քանի մը թիւեր տեսած էի Նազարբէկի «Հնչակ»էն , եւ անոր պոռոտախօս ու իմաստակ յօղումները շատ գէշ գաղափար մը կալմել տուած էին ինձի կուսակցութեան մը վրայ որուն օրկանը այդ տղայական թոնր ունէր . եւ Հնչակեանց մէջ չմտնելու պատճառներէս մէկն ալ «Հնչակ» թերթը եղած էր թերեւս . Արփիարեանի խօսքերը ժպտիլ տուին ինձի . ես որոշած էի միմակ գործել , առանց ուրիշ քոմիթէի կապուելու : Այդպէս ալ ըրի : Բարիզ գալէս յետոյ , մտքէս անգամ չանցուցի Նազարբէկին գոնէ նամակ մը գրել : Իր գործելու եղանակը աւելի մօտէն իմացայ հոս , եւ իրեն հետ կապուելու բաղձանքը , զոր չունէի արդէն , առաւել քան երբեք հեռացաւ ինէ : Անկից ի վեր միշտ պահած եմ միեւնոյն անկախ ու մեկուսացեալ գործողի դերքս : Երբ Նազարբէկի կեղրոնը տապալեցաւ եւ Արփիարեան ու իր ընկերները անցան վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան գլուխը , ես յայտնեցի որ չէի ուղեր այդ կուսակցութեան անգամակցիլ : Անոնց գործունէութեանը մեծ մասամբ տեղեակ էի , իմ դիտողութիւններս , խորհուրդներս կը յայտնէի իրենց , կրցածս կ'ընէ

երբ որոշ գործի մը համար ինծի կը գիտէին, —ինչ որ պիտի ընէի, եւ ըրած եմ, երբ ո եւ է մարմին կամ ո եւ է անհատ ինծի դիմած է, — առանց երբեք առոր համար տիպոս մը, պաշտօն մը կամ ո եւ է ձեռով փոխարինութիւն մը սպասելու: Գլխաւոր խորհուրդը զոր կուտայի Արփիարեանին՝ այդ միջոցին, այն էր որ քաշուէր յեղափոխական գործունէութենէն՝ որուն անկարող կը նկատէի զինքը, հիմա զայն գործի մէջ մօտէն տեսած ըլլալով: Երբ «Նոր Կեանք»ը ուղեց հրատարակել, յորդորեցի զինքը որ գրական անկախ օրկան մը ընէ զայն, ազգային կեանքի քննադատութեան ազատ թերթ մը: Յամառեցաւ մնալ յեղափոխական կուսակցութեան մը ղրուխը եւ «Նոր Կեանք»ը անոր պաշտօնական օրկանը ընել: աշխատակցութիւնս, զոր խնդրեց, չմերժեցի, զարձեալ պնդելով որ թերթը ներկայանար ոչ թէ իբրեւ Հնչակեան օրկան այլ իբրեւ գրական հանդէս մը: Յօդուածներս տպեցին, հակառակ իմ պայմանին, իբրեւ Հնչակեան օրկան հրատարակուող «Նոր Կեանք»ին մէջ: Եւ էր որ շատերուն կարծել տուաւ թէ Վերակազմեալ Հնչակեաններուն անդամակից էի, եւ «Նոր Կեանք»ի խմբագրութեան այդ ընթացքը ինծի ամենէն անախորժ երեւցած բաներէն մէկն է: Շարունակեցի սակայն աշխատակցութիւնս «Նոր Կեանք»ին, որովհետեւ զիս «Անահիտ»ը հիմնելու որոշումը տուած չըլլալով, կ'ուզէի տեղ մը ունենալ ազգային գործերու վրայ իմ մտածելու եղանակս յայտնելու համար, եւ սպասելով լաւագոյնին՝ ամենէն յարմար տեղը որ կար ինծի համար «Նոր Կեանք»ն էր: Քանի քանի անգամ խնդրեցի Արփիարեանէն որ յայտարարէ իր թերթին մէջ թէ ես, —ինչպէս եւ Սվաճեան, Երօտ, եւն, Հնչակեաններ չէինք, այլ անկախ գրողներ որ «Նոր Կեանք»ի մէջ կը գրէինք՝ առանց զայն հրատարակող կուսակցութեան պատկանելու: Միայն այս վերջերս՝ իմ մասին գրած իր մէկ յօդուածին մէջ է որ Արփիարեան այդ յայտարարութիւնը ըրաւ, եւ այն երբ ես արդէն «Անահիտ»ի մէջ երկու երեք անգամ ըսած էի այդ բանը: Իսկ այն բոլոր գործերուն մէջ զոր կատարած եմ հինգ տարիէ ի վեր, մէկ հատ մը չեմ յիշեր որ իր կամ իր ընկերներուն մղումովը կամ խորհրդովն ըրած ըլլամ:

Հիմա պիտի բանաձեւեմ այն կարծիքը զոր կազմած եմ Արփիարեանին վրայ՝ իբրեւ մարդ, իբրեւ հրապարակագիր եւ իբրեւ յեղափոխական գործիչ, կարծիք որ այն պահուն ուր այս տողերը կը գրեմ՝ շատ որոշ, գրեթէ վերջնական գծերով հաստատուած է այլեւս մտքիս մէջ, բայց որուն հասնելէ առաջ պիտի խոստովանիմ որ անցած եմ խարխալումներէ, շփոթութիւններէ, շուարումներէ զոր անհնար է չունենալ այդ բարդ, հակասական, խուսափուկ տիպարին հանդէպ եւ զոր ինձմէ շատ աւելի մտերիմ յարաբերութիւններով, յեղափոխական կամ հրապարակագրական ամենասերտ գործունէութեամբ իրեն հետ կապուած անձեր իսկ ունեցած են:

Արփիարեանը անուանարկելու համար անոր դէմ պաշտօնի մասալը հնարող Դաշնակցականները ոչ միայն անազնիւ գործ մը կատարած են, այլ եւ անխելք: Կարելի չէ զոռով մարդու մը կպցնել դիմակ մը որ չի յարմար իր անոր դէմքին: հետուէն դիտող անծանօթներու համար, դիմակը կրնայ՝ դէմքին խուսուելով՝ զայն մինչեւ աստիճան մը այլակերպել: բայց դէմքը քիչ շատ մօտէն ճանչցողները, դիմակին ստութենէն որքան տղեղութիւնէն զոռւած, կը մղուին, շատ բնական հակադրեցութեամբ մը, աւելի գեղեցիկ տեսնելու դէմքը՝ քան ինչ որ է իրօք: Շատեր գիտեմ որ «մասնիչի խնդրէն» առաջ՝ միջակ համակրութիւն մը ունէին Արփիարեանի համար, ուրիշներ որ նոյն իսկ հակակրութիւն կը զգային իրեն նկատմամբ: իր մէկ քանի խոշոր թերութիւններն աչքի առջեւ ունենալով, բայց այդ անձերը առանց վարանելու Արփիարեանին պաշտպան կանգնեցան՝ Դաշնակցականներու զրպարտութեանը դէմ որուն հաւասար ընծալելու անկարող կը զգային զիրենք: նոյն իսկ տեսնելով որ զրպարտութիւնը կ'աճէր, կը բազմապատկուէր, հետզհետէ աւելի ծայրայեղ ու այլանդակ կը դառնար, այդքան մոլեղնութեամբ ու անխղճութեամբ հալածուած գործիչի մը համար համակրութեան անխուսափելի բերում մը ունեցան որ կը մեղմացնէր իրենց համակրութիւնը անոր ճշմարիտ թերութեանցը նկատմամբ: «Անխելք» եղաւ, կ'ըսեմ, այդ վարմունքը, որովհետեւ Դաշնակցականներուն բողոքներին հակառակ արդիւնքը տրուաւ, Արփիարեանին շուրջը համակրութիւնները բազմապատկեց կամ ծնոյց եւ Դաշ-

նակցութեան զէմ հակակրութիւններ ստեղծեց՝ որոնք սաստկացան երբ տեսնուեցաւ թէ Դաշնակցականները իրենց համար սխտեմ մը ըրած են զրպարտութիւնը եւ իրենց անախորժ երեւցող սեւէ անձի զէմ չեն վարանիր այդ զէնքը գործածել :

Դաշնակցութիւնը այդ անխելքութիւնը իր գաղաթնակէտին հասցուց երբ հրատարակեց «Դրօշակ»-ի յաւելումը որ Արփիարեանի մատնչութիւնն հաստատող կարծեցեալ տաքի մանները կը պարունակէր : Ես գիտեմ որ Դաշնակցութեան մէջ գտնուած են առջի օրէն , եւ կան մինչեւ այժմ , թէ՛ կովկաս եւ թէ՛ արաստահման , շատ կարեւոր անդամներ , որոնք չեն հաստատեցած թէ Արփիարեան կրնայ մատնիչ ըլլալ : Անոնցմէ մին , — կովկասի Հայութեան ամենէն ծանօթ գործիչներէն մէկը , — վերջերս Բարիդ ինձի կը հաւաստէր թէ ժօտն ճանչցած ըլլալով Արփիարեանը , երբեք չէր կրցած հաւատալ անոր զէմ յարուցուած ամբաստանութեան , եւ որ մասնաւորապէս կը շեշտէր թէ Գ. Արծրունիի եւ Արփիարեանի յարաբերութեանց ականատես ծանօթ մը ըլլալով , գիտէր որ հաղար բուսլլիի իւրացման պատմութիւնը ճշմարտութեան համաձայն չէ : Ճաւալի է որ Դաշնակցութեան վարիչ մարմինը իր «Իժ»երուն թիւղորութիւնը նախընտրած ըլլայ իր այդ լուրջ ու ազնիւ անդամներուն կարծիքէն եւ այդ յաւելումը հրատարակելով ամբողջ Դաշնակցութեան պաշտօնական հաւանութիւնը տարածած ըլլայ իւր մը մը Դաշնակցականներու արարքին վրայ : Գիտեմ որ Դաշնակցութեան վարիչ մարմնոյն վրայ սղղեցութիւն գործած է Պոլսոյ Դաշնակցական քոմիթէին Արփիարեանը իրեւ դուռձան մահուան դատապարտող վճռագրին ներքեւ Բարկէն Սիւնիի մը յարգելի անունին գտնուելը : Բայց շատ դիւրին էր մտածել որ Բարկէնը , հրարորքք խանդավառ մը՝ անկարող պաղ վերլուծումի , «Հրանգ»ներէն ու Իւսուֆեաններէն մղուած եւ անգիտակցաբար անոնց ուխին գործիքը եղած էր : Դաշնակցութեան վարիչ մարմինը կրնար , եւ պարտէր , այդ յաւելումը հրատարակելէ առաջ , գիմել ամենէն իրեւ անկողմնակալ եւ պարկեշտ ճանչցուած այն Հնչակեաններուն ինչպէս եւ այն բոլոր լուրջ եւ ուղղամիտ չէղքք անհասներուն որոնք կը յայտարարէին թէ չեն կրնար Արփիարեանը դուռձան ընդունիլ , եւ պէտք էր որ անոնց հարցնէր պատճառները որ զիրենք կը

մղէին այդպէս վարուելու : Վստահ եմ որ եթէ այդպէս ըրած ըլլային , չպիտի հրատարակէին իրենց յաւելումը , որ այնքան անախորժ ու վնասակար տղաւորութիւն մը սուաջ բերաւ , եւ , ա՛յնպիսի վայրկեանի մը ուր ամբողջ ազգը կը բաղձար յեղափոխական մարմինները միացած ու համերաշխ տեսնել , աւելի լայնցուց խրամատը որ կը բաժնէր Հնչակեաններն ու Դաշնակցականները , քանի որ մասնաւոր այդ յաւելումը կը ձգտէր անուանարկել ոչ միայն Արփիարեանը , այլ բովանդակ Հնչակեան կուսակցութիւնը սկիզբէն մինչեւ այսօր : Աւելին պիտի ըսեմ : Կը բաւէր նոյն իսկ որ Դաշնակցութեան վարիչ մարմինը իր յարգանքն ու վստահութիւնը վայելող անձ մը զրկէր Լոնտօն , որ՝ առանց ըսելու թէ Դաշնակցականներուն կողմէն կուգար՝ քանի մը տեսակցութիւններ ունենար Արփիարեանին հետ , մօտէն ու սուսնասիրէր անոր մտածելու , խօսելու , գործելու եղանակը : Եւ այդ անձը՝ զարձին՝ անպատճառ խորհուրդ պիտի տար Դաշնակցութեան որ հրամարի այդ Յաւելումը հրատարակելէ , որովհետեւ երկու տեսակցութիւնէ յետոյ՝ ան ըմբռնած պիտի ըլլար որ Արփիարեանի ֆիզիքապէս անկարող է ըլլալու այն վիթխարի «քանայլ»ը զոր յաւելումը կը պատկերացնէ մ.յո՛ , Արփիարեան ոչ միայն՝ ըստ իս՝ չի կրնար գործած ըլլալ իրեն վերագրուած մատնչութեան արարքները՝ որովհետեւ հակառակ իր բոլոր թերութիւններուն զինքը չեմ կարող այդ գարշելի ոճիրին ատակ նկատել : այլ մասնաւոր որովհետեւ իր մտքի կազմուածքն ու իր նկարագիրը երբեք պիտի կարող չըլլային արտադրել երկսայրի ծրագրի մը մէջ շարունակաբար յարատուող ու գիւցազնականօրէն ճարտիկ այդ խաբեբան զոր յաւելումը ցոյց կուտայ Պէտք է նկատել թէ յաւելումին մէջ , Արփիարեան այլեւս բանտին մէջ երկու երեք հոգիի անունը բերան տուող հասարակ մատնիչը չէ , այլ արտաստիկը վարպետորդի մը , որ Պոլիս մէկ կողմէն «Հայրենիք»-ի խմբագրութիւնը ձեռքն ունի , Հնչակեաններու ազդեցիկ մէկ անդամն է , ազգին կը ներկայանայ իրեւ ազատական գործող մը , հայրենասէր մը , յեղափոխական մը , եւ միւս կողմէն նազիմ փաշային լրտեսն է , ազգին ու յեղափոխութեան գաղտնիքները անոր կը հաղորդէ , եւ որ , դանակի հարուածէն ալ յետոյ՝ ոչ միայն միշտ ճարտիկ այլ եւ անվախ՝ կը շարունակէ հինգ տարիէ ի վեր Եւրոպայի մէջ մէկ կողմէն

յեղափոխական կուսակցութեան մը ամբողջ վարչութիւնը ամէն անցընել ու միւս կողմէն Սուլթանին ու Պոլոսոյ ոստիկանութեան հետ գաղտնի յարաբերութիւններով կապուած՝ յեղափոխական ամբողջ շարժումը ջնջելու համար ստորերկրեայ մասը գործունէութիւն մը մեթոտականաբար ու զիտակցաբար կատարել... Այս բոլորը եթէ ըրած ըլլար, Արփիարեան այսօր միլիոնատէր մը դարձած ըլլալու էր, որովհետեւ այն միակ պաշտօնեաները որ Սուլթանէն կանոնաւորապէս եւ առատօրէն ամսական կ'առնէն՝ լրտեսներն են, եւ Արփիարեան իր գերքով է'ն արդիւնաւոր լրտեսը կրնար ըլլալ Սուլթանին համար. արդ, գիտենք որ Արփիարեան այնչափ հեռու է միլիոնատէրի վիճակ ունենալէ որ հակառակ յեղափոխական կուսակցութեան մը գերագոյն պետը ըլլալուն, յաճախ անհատական հանդէսի համեստ խմբագրապետի մը պէս Ամերիկայէն դալիք քանի մը բաժնեգէնի կը սպասէ անձկալից, տպագրութեան ծախքերը հոգալու համար «Նոր կեանք»ին որուն վերջին չորս թիւը երկուքի մէջ ամփոփուած էին խնայողաբար: Յետոյ, իրօք կատարած ըլլալու համար այդ գերաճարպիկ լաբախազացի գերը, Արփիարեան պէտք էր որ զիւանագիտական հասկնար մը ըլլար, որուն քով Պիղմարքը պիտի տնօրէնէր. մինչդեռ ամենուս յայտնի է որ Արփիարեան, բաւական ճարպիկ ու հնարամիտ անչուշտ, չունի ոչ մտքի ոչ նկարագրի հարկաւոր զօրութիւնը այդպիսի դժուարին, վաճառալից ու փոփոկ գեր մը յարատեւաբար կատարելու համար. իր ճարպկութիւնները կարճատեւ, թեթեւ, վրան-բաց են եւ իրարու հետ անյօդ ու անկապակից:

Արփիարեան ուրիշ բան չէ բայց եթէ «Քալինօ-Մաքիավելլ»մը, ինչպէս կը գրէր Բաշալեան վերջերս բարեկամի մը ուղղուած նամակի մը մէջ: Այդ բացատրութիւնը զոր Բաշալեան կատակով գործածած էր, ճշգրտօրէն բանաձեւն է Արփիարեանի հողեբանութիւնը բնորոշող. եւ Քալինօն աւելի մեծ «տող»ով կը գտնուի Արփիարեանի մէջ քան թէ Մաքիավելլը:

Փոխանակ մատնչութեան այդ անհիմ աւերաստանութիւնը Արփիարեանի երեսին նետելու եւ ատով անոր մարտիրոսի մը լուսապսակը շնորհելու, եթէ Դաշնակցականները առջի օրէն պարզապէս եւ ուղղամտաբար երեւան հանած ըլլային Արփիարեանի իրական քերուխնները, եթէ զայն ներկայացուցած ըլլային

առանց ո եւ է չափազանցումի՝ աշխարհ ինչպէս որ է, եւ այդ անխարդախ լուսանկարին վրայ հիմնուելով յայտարարէին անոր անկարողութիւնը յեղափոխական գործունէութեան՝ իրենց համակարծիք պիտի ունենային քոչուր: Հայերը, իրենց գրպարտուածի պայքարը պատճառ եղաւ միանգամայն որ շատերը, որոնցմէ եմ եւ ես, զգուշացան մինչեւ ցարդ Արփիարեանի իրական թերութիւններուն վրայ հրապարակաւ խօսելէ՝ չուզելով որ ո եւ է կերպով ուժ տուած ըլլան Արփիարեանը զրպարտութեամբ մը զգեստել ջանացող անձերուն: Այդ է որ ոմանց կարծել տուաւ թէ «Արփիարեանը մատնիչ ըլլալու անկարող է» ըսողները զայն անթերի եւ անքննադատելի գործիչ մը կը նկատէին. այդ անձերը պարզապէս կը սպասէին որ Պատուոյ ատեանը կազմուէր եւ «մատնիչի խնդիրը» վերջնապէս լուծուէր (այսինքն Արփիարեանի դէմ հիւսուած զրպարտութիւնը քայքայուէր), որպէս զի կարենային իրենց կարծիքը յայտնել Արփիարեանի իբրեւ գործիչ ունեցած պակասութեանց վրայ: Բայց Պատուոյ ատեանը, հակառակ մեր ամենուս բաղձանքին ու ճիգերուն, անիրականալից ցրտորքի մը ձեւ առած է այսօր. Դաշնակցութիւնը մերժեց այդ առաջարկութիւնը, եւ հինգ ամիսէ ի վեր վեր. Հնչ. կուսակցութիւնը ոչ մէկ որոշում չէ հրապարակած այդ մասին: Այլ եւս կրնանք, եւ արդէն պարտաւոր ալ ենք՝ շրփոթած, մութի մէջ մնացած հանրային կարծիքին համար՝ ըսել ինչ որ կը մտածենք Արփիարեանի մասին, առանց վերապահումի, բայց եւ առանց ո եւ է երկդիմութեան, ու բացարձակապէս համոզուած ըլլալով որ մեր այս հիւմա ըսածները մինչեւ ցարդ ըսածներնուս հետ բնաւ հակասութիւն չեն կազմեր:

Արփիար Արփիարեանի թերութիւնները կը բղխին զլիաւորապէս իր այն կարեւոր սխալէն որով չէ ուղած սահմանափակուիլ իր այն գերին մէջ որուն իր ձիրքերը զինքը կը կոչէին եւ յամառած է յաճախ կատարել այնպիսի գործեր որոնց անատակ է:

Այդ պատճառով է որ Արփիարեան, որ օգտակար տարր մը կացուցանելու համար մէկ

Քանի մեծ ձիրքեր ունի եւ օգտակար եղած ալ է շատ անգամ ու կարեւորապէս, մղուած է յաճախ վնասակար դատնալու եւ ծանրօրէն վընասակար :

Արփիարեան կոչուած էր «Իւմորիսթ» մը ըլլալու Իւմորիսթը այն մարդն է որ աշխարհը քմածին զգայնութեան մը մէջէն կը տեսնէ , որ կարող է գորովի, խանդաղատանքի, խանդավառութեան ու զայրոյթի, բայց ուր ամէն բան բարատքսի ձեւով կ'ըմբռնէ եւ որուն մտքին տիրական վիճակը հեզնութիւնն է : Արփիարեանի գրական գործէն ինչ որ պիտի մնայ անւական ու միշտ շահեկան , իր «Օրուան կեանքերն» են եւ իր «Փամամնց»ները , որոնց մէջ կը տեսնենք անկեղծ ու ինքնատիպ խառնուածք մը ինքզինքը հաւատարմօրէն արտայայտելու հաճոյքին մէջ բնականօրէն արբշխու : Իր վիպակները իրապաշտ գրականութեան մեր մէջ առաջին փորձերն ըլլալու արժանիքը միայն ունին , եւ իբր յղացում ու արտայայտութիւն՝ միջակ ու հապճեպ արուեստագէտ մը ի յայտ կը բերեն . իր հրապարակագրական անհամար էջերը , իր ազգային ու քաղաքական ուսումնասիրութիւնները , շատ յաճախ լեցուն՝ նոր եւ ուշիմ տեսութիւններով, գրեթէ միշտ վառվռուն՝ ճապուկ ու պայքարող մտածումով մը , ընդհանուր ու խորունկ հըմտութեան մը , տիրական համոզմունքի մը , անխախտ ու անփոփոխ իմաստասիրութեան մը հիմունքէն զուրկ են , հատուածական , յեղեւզուկ , մակերեւութային , հակասական բան մը ունին : Բազմաձև գործունէութեան մը մէջ ինքզինքը փոփոխելով վնասակար եղած է այսպէս Արփիարեանին , նախ իր տաղանդին համար , ապա իր անոր՝ իր ամենէն հարազատ ձեւին մէջ կատարեալ ու խնամուած եղանակով մը արտայայտուելով : Անընդհատ արտադրելով ու զործելով զբաղած , Արփիարեան շատ քիչ եւ շատ հապճեպ կերպով կարգացած է , ու իր բոլոր գրականութիւնը իրագործած է ափ յափոյ , միշտ շահեկան ու ճկուն բայց անկատար , կցկատուր ոճով մը , որ իր Պոլսոյ արտադրութեանցը մէջ միշտ կաղ ու մերկ է եղած , ու յաճախ պարզապէս տղայական , եւ որ վերջերս միայն , «Նոր կեանք»ի էջերուն մէջ , կրցաւ վերանորոգուիլ , զարգանալ , կոկուրի՝ ազդեցութեամբ արուեստագիտական գրականութեան հետ առաջին լուրջ շփումին զոր Արփիարեան «հիմա Բըսքիսի ընթերցող եւ Միտքիւն աը ֆրանս»ի (qui l'eût dit ?) բաժանորդ , — ունեցաւ Եւրոպա գալէն ի վեր : Եթէ առջի օրէն Արփիարեան սահմանափակուած ըլլար իր ու-

րոյն ուրտին մէջ , եթէ իր մտքին բոլոր ուժերը նուիրած ըլլար իր հեզնող արուեստագէտի գերը անթերի կերպով կատարելու , այսօր մեր ամենէն մեծ գրադէտներէն մէկը կ'ըլլար եւ իր տեսակին մէջ՝ շատ յարգելի գործիչ մը , եւ չէր արժանանար այն մեղադրանքներուն զոր ստիպուած ենք իրեն ուղղել :

Բայց Արփիարեան ուզած է ոչ միայն գրականութեան մէջ ինքզինքը տարադնել , այլ եւ «գործիչ մը ըլլալու» որոշումը սուած է : Արդ , իւմորիսթը գործիչ չի կրնար ըլլալ . գործիչին անհրաժեշտ է ունենալ խորունկ ու ամուր հաւատք , տեսական ու անխառն խանդավառութիւն , կարգ մը գաղափարներու , մէկ քանի սկզբունքներու անվկանդ ու մոլեռանդ յարում , անսնելու մասնաւոր եղանակի մը մէջ անխախտ յարատեւութիւն , ու նոյն իսկ քիչ մը միամտութիւն , ու նոյն իսկ քիչ մը «պատուելիութիւն» , բաներ որոնցմէ զուրկ է Արփիարեան , միշտ հակամէտ փոխուելու , միշտ տրամադիր ասեղի ծակի մը մէջէն անցնելու չափ ճապկանալու , ու խորքին մէջ միշտ սկեպտիկ՝ հակառակ իր առերևոյթ աւելնին պերճախօսութիւններուն , ու իր կարճատեւ բորբոքումներուն մէջ իսկ միշտ հեզնոտ ու միշտ անբուժելիօրէն թեթեւօտիկ : Արփիարեան կարծես թէ ինքզինքը պատկերացուցած էր իր այն պզտիկ քերթուածին մէջ որով վերջերս (Նոր կեանք» , Ա . Տարի , էջ 282) «հոսնոս»ը կ'երգէր ու կը փառաբանէր .

«Ան ինչ սիրուն յատկանշական որակիչ մըն է որ ստեղծած են մեզի համար . «հոսնոս» , թեթեւալաց , քաղցրանշակ , նրբին ածական , որ կարծես աչքիդ առջեւ կը բերէ , կը պատկերացնէ ջինջ սրախ մը , օդաչու հոգիի մը մարմնացումը , Պոլսոյ երկինքին պէս կապուտակ , Պոլսոյ զեւփուտին պէս թռչտուն , Պոլսոյ օդին պէս փոփոխական , առտուն որ գրեր ես իրիկունը գտիր եթէ կրնաս» . . .

Այս քերթուածիկը , իր վերջին տողերուն մէջ ճանաւանդ , բնաւ երբեք չի համապատասխաներ Պէշիկթաշլեաններ , Սըբուհի մայրապետներ ու իզմիրլեաններ արտադրող Պոլսահային , բայց կատարելապէս կը պատշաճի («վճիտ»էն ու «կապուտակ»էն զատ՝ անշուշտ) Արփիարեանի տիպարին , որ կը պարծենայ եղեր (այս չքնող մանրամասնութիւնն այս օրերս իմացայ) թէ յօգուած մը աւարտելէն յետոյ՝ կարող է , եթէ պարագաները յանկարծ փոխուին , զայն վերստին գրել՝ ճիշդ հակառակ իմաստովը :

Արփիարեան գործած է իբրեւ հրապարակագիր , իբրեւ երեսփոխան եւ իբրեւ յեղափոխական : Այդ բոլոր ձեւերուն մէջ մէկ քանի օգտակար արարքներ ունեցած է . Միացեալ Ըն-

կերուծեալ հանց սկզբնական դադարին յղացող-  
 ներէն մէկն եղած եւ անոր իրազորման աշ-  
 խատած ըլլալը իր կեանքին պատուաբեր էջե-  
 րէն մէկը կը կազմէ . Արծրունիին հետ իր  
 գործակցութիւնը, կապը զոր հաստատած է  
 Ռուսահայոց եւ Թրքահայոց միջեւ՝ իր «Մշա-  
 կ»ին թղթակցութիւններովը, աշակցութիւնը  
 զոր տուած է Արծրունիին՝ նախ կրթական եւ  
 եւ յետոյ յեղափոխական գործունէութեան մէջ  
 ռուսահայ եւ տաճկահայ ճիգերը միացնելու  
 համար, իր «պահանջէ»ին անցուելու կարե-  
 ւոր տիպազանքն են . եւ իր դերը Երեսփոխա-  
 նական ժողովին մէջ, եւ իր յօգուածներուն  
 մշտական կոխը՝ Հայոց մէջ յեղափոխական  
 ոգին արծարծող ամենէն նշանակելի ազգակնե-  
 րէն եղած են . ըսյց ատոնցմէ գուրս, անհամար  
 են սխալները, պակասութիւնները, ծուռ դար-  
 նուած հարուածները . եւ նոյն իսկ այդ մէկ  
 քանի արարքները թերութիւններով եղծուած  
 են : Չեմ գիտեր թէ Հայաստանի մէջ նախնա-  
 կան կրթութիւն տարածելու դադարաբեր ու-  
 նեցողներէն մէկն ըլլալէ յետոյ՝ Արփիարեան  
 ի՞նչ ըրած է զպրոցներուն կազմակերպու-  
 թեանն ու պաշտօնավարմանը համար չեմ երե-  
 ւակայեր որ դպրոցի ծրագիր մը յղացած,  
 կրթական ուղղութիւն մը նշանակելու կարող  
 եղած ըլլայ . շատ հաւանական է որ Միացեալ  
 Ընկերութեանց տնօրէն մարմնոյն ժողովներուն  
 մէջ՝ իր գլխաւոր մտահոգութիւնը իր գոր-  
 ծակիցները ծաղրելու միջոց մը փնտռելն եղած  
 ըլլալու է : Իբրեւ երեսփոխան, ըսի թէ ո՛րքան  
 շահեկան տարր մը կազմած է Ազգային ժողո-  
 վին մէջ իր պայքարողի դիրքը, բայց չեմ գի-  
 տեր թէ Ազգային ժողովին մէջ քանի՛ անգամ  
 պատահած է որ որոշ ու գործնական դադարաբ-  
 ար լրջօրէն նշանակած ըլլայ, կամ գործ մը  
 իր ձեռքովը յստակօրէն եւ ջերմօրէն կատա-  
 բած ըլլայ . հեղնութեան տարր մը, ժըխ-  
 տական ուժ մը կազմած է հոն, եւ յաճախ  
 իր հեղնութիւնը թեթեւութեան հասած է եւ  
 իր ժխտումը անիմաստ է եղած ու վնասաբեր .  
 Կը յիշեմ ժողովը մը ուր Արփիարեան բեմին  
 վրայ իր ծաղրածութիւններուն բոժոժներն  
 այնքան ծայրայեղ անպառկառութեամբ մը  
 թոթուել սկսաւ որ նախագահը, Տր. Թիւրքեան,  
 ստիպուեցաւ պէտք զգալ սա համեղ միջամ-  
 տութեանը՝ «Արփիարեան էֆէնտի, շննայի  
 վրայ չենք »

Իբրեւ հրապարակագիր, Արփիարեանի գոր-  
 ծունէութիւնը բազմազիմի քննադատութեանց  
 տեղի կուտայ : «Մշակ»ին թղթակցութիւննե-  
 րովը՝ Ռուսահայոց եւ Տաճկահայոց միջեւ քսան  
 տարիի չափ տեսակ մը կենդանի կամուրջ մը  
 եղած է ինքը՝ անշուշտ, բայց խախուտ կա-  
 մուրջ մը, որ վերջ ի վերջոյ յանկարծ կոտրած  
 ու պատճառ եղած է երկու եզերքներուն ի-  
 րարմէ առաջուընէ աւելի հեռանալուն ու ան-  
 ջատուելուն : Արծրունի-Արփիարեան գործակ-  
 ցութիւնէն առաջ, Նազարեան-Սվաճեան գործակ-  
 ցութիւն մը գոյութիւն ունեցած է, զոր ամենքը  
 մոռցած են այսօր՝ եւ շատ անիրաւաբար . Ս.  
 Նազարեան, եղբայրական հոգածութեամբ մը ու-  
 չաղիթ թրքահայ հասարակութեան մէջ կա-  
 տարուած վերանորոգման ճիգերուն, ազնիւ ու  
 ռ եւ է արհամարհանքէ զերծ քննադատութիւն  
 մը ներկայացուցած է, յառաջդիմական  
 ջանքերուն համար իր բոլոր խրախուսանքը  
 չափելով . Յ. Սվաճեան նմանապէս արծագանք  
 տուած է այն բոլոր ճիգերուն զոր Նազարեան  
 ու Նալբանդեան կը թափէին Ռուսահայոց լա-  
 բոյական զարգացումը փութացնելու համար :

Արփիարեան բոլորովին տարբեր կերպով  
 կատարած է իր դերը . քաջալերած է Արծրու-  
 նին իր արհամարհանքին մէջ դէպ ի Տաճ-  
 կահայերն ընդհանրապէս եւ Պոլսոյ Հայերը  
 մասնաւորապէս . իր թղթակցութեանց մեծա-  
 գոյն մասը նուիրած է Տաճկահայերուն («հո-  
 սոսութիւն»)ը ծաղրելու . միւս կողմէն տարի-  
 ներով մեր գլուխը ուռեցուցած է Ռուսահայե-  
 րուն մտաւորական, բարոյական, գրական  
 ջախջախիչ գերազանցութեանը մասին իր ան-  
 ընդհատական քարոզներովը, («Ինչո՞ւ կը զար-  
 մանաք որ Ռուսահայերը ձեզ թեթեւ ու յիմար  
 կը նկատեն, կ'ըսէր օր մը տիկին Մատակեան,  
 ձեր «Հայկակ»ն է որ ձեզ այդպէս ճանչցուցած  
 է մեզի») : Այդ միեւնոյն մարդը, (որ երբեք չէ  
 հասկցած որ ցեղի մը կէսը չի կրնար ոչ աւե-  
 լի ուշիմ ոչ աւելի ապուշ ըլլալ քան միւս  
 կէսը, եւ թէ աշխարհադրահան ու պատմական  
 որոշ ու տարբեր ազգեցութիւններու ենթար-  
 կուած այդ երկու կէսերը, առանց իրարմէ բարձր  
 կամ ստորին ըլլալու, ստիպուած են սարքեր  
 ըլլալ իրարմէ), այսօր յիմարական պայքար մը  
 սկսած է Ռուսահայերուն դէմ, զանոնք ներ-  
 կայացնելով իբրեւ անզգայ, ապուշ ու եսական,  
 եւ իբրեւ միակ սկզբնապատճառը այն բո-  
 լոր ազէտքներուն որ Տաճկահայոց վրայ

խուժեցին, եւ իբրև ազգին դէմ դիտակցա-  
լար դաւանանող վարձկաններ... (\*)

Այդ փոփոխամտութիւնը երեւան բերաւ Ար-  
փիարեան ոչ միայն Ռուսահայերուն այլ եւ  
Ռուսերուն նկատմամբ : Պոլսոյ մէջ ռուսամոլ  
մըն էր, Մամուրեանէն Ռուսիոյ մէկ վարձկանը  
համարուելու աստիճան, Ռուսիայէն կը սպասէր  
Հայուն փրկութիւնը, «Մասիս»ին մէջ ազգին  
ուշադրութիւնը եւ համակրութիւնը կը ջանար  
դարձնել ղէպ ի ռուսական քաղաքականու-  
թիւնը, զրականութիւնը, եւն. հիմա կատարի  
եւ անվերապահ ռուսատեաց մը դարձած է,  
ատելութեամբ մը որ կը տարածուի անցեալ,  
ն երկայ եւ ապագայ Ռուսաստանին եւ որուն  
յեղափոխական կուսակցութեան մը պաշտօնա-  
կան օրկանին մէջ այդ բիրտ ու կրքոտ անըս-  
քօղութեամբ դրօշուիլը Արփիարեանի դիւա-  
նագիտական ապիկարութեան խոշոր ապացոյց-  
յերէն մէկն է, մանաւանդ երբ կը տեսնենք որ  
Ռուսը Հայուն մեծագոյն ու գրեթէ միակ թըշ-  
նամին հոշակած պահուն, — մանկու Մամուր-  
եանի դպրոցին մէջ, որուն ամենէն ոխերիմ  
հակառակորդն էր ատենով, — Արփիարեան խոր-  
հուրդ կուտայ Համիաի կառավարութեան որ  
ինքնաբերաբար Հայաստանին ինքնավարու-  
թիւն շնորհէ՝ իր պետութեան շահերը Ռուսիոյ  
դէմ պաշտպանելու համար, եւ կարող կ'ըլլայ՝  
բայ ի բռնուած դիրքին սղեղութենէն՝ երկ-  
վայրկեան մը յուսալու որ տաճիկ ըսուած ցե-  
ղը ատակ ըլլայ այդպիսի լայն, ուշիմ եւ ազ-  
նիւ դիւանազրտութիւն մը ունենալու :

Փոփոխամտութեան չափ կարեւոր թերու-  
թիւն մը Արփիարեանի հրապարակագրական  
գործունէութեան մէջ՝ իր կըքոտութիւնը, իր  
էնթրիկի եւ անձնական կոխներու սէրն է :  
Ինտեմ որ յաճախ դաղափարը անձէն կարելի  
չէ զատել, եւ ասուած դաղափար մը ջախ-  
ջախելու ամենէն ուժեղ միջոցը գայն պատ-  
կիրացնող անձ մը գաստփետելն է, բայց լուրջ  
հրապարակագիրը, նոյն իսկ անձը հարուածած  
ատեն՝ յստակօրէն կը զգացնէ որ իր հարուած-  
ներ անձին մէջէն գաղափարին կ'ուզուին,  
եւ անձին մէջ միայն այն կողմերը ի վեր կը  
հանէ որոնք ջախջախուելիք գաղափարին ուղ-  
ղակի կը համապատասխանեն. Արփիարեան, շատ  
յաճախ աւելի բանֆլէթէն քան հրապարա-

(\*) Այն միջոցին ուր ասի կը գրեմ, Արփիար-  
եան, նոր ավաթարի մը մէջ մտնելու հակամէտ,  
կը փորձէ իր «սիլբիլի»ն վերսկսել Ռուսա-  
հայերուն հետ...

կազիր, անձը աւելի աչքի առջեւ ունեցած է  
քան գաղափարը, անձին բոլոր երկրորդական  
ուճղճիմ կողմերովը, հանրային տեսակէտով կա-  
րեւորութիւն չունեցող բայց իր երգիծանքին  
նիւթ մատակարարել կարենալու միակ շահե-  
կանութիւնն ընծայող բոլոր մանրամասնու-  
թիւններովը երկարօրէն զբաղած է, յամեցած  
է ատենց մէջ, զուարճացած է ատոնցմով : Ու  
շատ անգամ այսիսալ տեսած է անձերը, զանոնք  
իր կիրքերուն, ոխերուն մէջէն նկատած է, եւ  
ոտքերնէն մինչեւ գլուխին ծաղրելի կամ  
զղուելի ներկայացուցած է այնպիսի մարդիկ,  
ինչպէս Մելքիսեղեկ Մուրատեանց սրբազանը,  
Մամուրեանը, Ռ. Պէրպէրեանը, որոնց մէջ գա-  
ղափարի, ձգտումներու տարբերութիւններ մի-  
այն պէտք էր որ ի վեր հանած ըլլար՝ յարգե-  
լով արժանիքները որոնցմէ զուրկ չէին անոնք :  
Այսպէս նաեւ Ալեքային Հիւանդանոցի վար-  
չութեան դէմ իր մղած շատ իրաւացի պայ-  
քարը խաթարուած է այն կատարութեամբը  
զոր ցոյց տուած է այդ վարչութեան գլուխը  
գտնուող այս կամ այն անձին դէմ, Միքայէլ  
Յակոբեանի մը գէմ, օրինակի համար, կա-  
տարութիւն որ անիմաստ էր եւ անիրաւ, քա-  
նի որ Յակոբեան յոռի վարիչ մը կրնար ըլլալ  
բայց անշահախնդիր մը եւ անձնուէր մըն էր  
անտարակուսելի կերպով : Մեզի պէս ամէն  
բան կորսնցուցած ու ազգային գոյութեան  
մը հիմունքը հաստատել ձգնող ազգի մը մէջ,  
հրապարակագիրը պէտք է որ դասակարգներու  
միջեւ բուռն անջատումներ չփորէ, ընդհակա-  
ռակն լայնամիտ քննադատութեամբ մը ջանայ  
վարել հարուստ դասակարգին այն անձերը ո-  
րոնք անազնիւ կամ վարչելի չեն կրնար նը-  
կատուիլ (եւ կարելի չէ ըսել թէ կը պակսին  
բոլորովին մեր մէջ այդպիսիները) : «Հայրե-  
նիք»ի մեծ սխալներէն մէկը եղաւ անհաշտ ու  
մոլեգին կռիւ մը մղել արեւոյջ հարուստ գա-  
տակարգին դէմ : Եթէ «Հայրենիք» հարուստ  
ներուն մէջէն բռնուելիք կողմեր ունեցողնե-  
րուն նկատմամբ բարեկամական քննադատու-  
թեան, անթոյն խորհրդատուութեան մեթոտը  
գործածած ըլլար, անոնցմէ մէկ կարեւոր մասը  
իր բանակին մէջ պիտի ունենար, եւ անոնց-  
մով պիտի կարենար իրագործել ճշադիրներ,  
որոնք միմիայն կծու քրոնիկներով չէ որ  
կրնան իրագործուիլ : Արփիարեանի ուղղու-  
թիւնն էր որ գլխաւոր պատճառ կաղմեց այդ  
անջատումին : Շահնազար ալ գորովալից չէր  
եղած հարուստներուն համար : Բայց այդ ամ-

բողջ դասակարգը անսակ մը յարդանք կը շարունակէր ունենալ Շահնազարին համար , որուն յարձակումները զաղափարներու վրայ հիմնուած էին , մինչդեռ Արփիարեանի անունը անարգաւանդ ու պառակտողական ատելութիւն մը միայն կ'արթնցնէր այդ դասակարգին մէջ :

Իրրեւ յեղափոխական ունեցած իր դործունէութեանը մէջ է սակայն որ Արփիարեանի թերութիւնները ամենէն ցայտուցիկ կը դառնան : Մեր մէջ յեղափոխական շարժումի մը ծնելուն եւ առաջին կազմակերպութեան ուրուագիծն առնելուն երեւոյթին մէջ Արփիարեան զեր մը ունեցած է , զայդ աններկի պիտի ըլլար ուրանալ : Բայց զրդիչի , սահմանափակ դերէն երբ անցած է դործադրիչի , կազմակերպիչի , վարիչի գործին , Արփիարեան իսկոյն ցոյց տուած է իր բացարձակ անկարողութիւնը : Ռուսահայոց համար իր նախկին պաշտամունքն է զլիսաւորապէս որ մղած է Պոլսոյ Հնչակեանները սէր եւ սիկին նազարէկեանը անքննադատելի եւ անսխալ պետեր նկատելու : Իր ամենուն դէմ սրուած սկիստութիւնը երբեք չէ փորձուած այդ ամուլին մօտենալու : մինչդեռ ո եւ է լուրջ յեղափոխական գործիչ , առանց պէտք ունենալու երգիծական ձիրքերու , իր առաջին պարտականութիւնը պիտի համարէր մօտէն ճանչնալ Եւրոպայի մէջ հաստատուած վարիչներուն ո՛վ եւ ի՛նչ ըլլալը : Եւրոպական քաղաքականութեան տրամալըրութիւններուն , մամուլին հոգեբանութեանը , հանրային կարծիքին կացութեանը մասին՝ երկու երեք լրագիր կարդալով միայն սարտամ տեղեկութիւն մը ստացած , Արփիարեան մէկն եղաւ անոնցմէ որ առանց ոչ մէկ յոյս կամ ապահովութիւն ունենալու , առանց որոշապէս հաշուած ըլլալու հաւանականութիւններն ու կարելիութիւնները , մղեցին ժողովուրդը այնպիսի արարքներ ընելու որ յայտնապէս վտանգաւոր էին եւ որոնք անեղաբար աղետաբեր եղան իրեն : Եւ տեսնելով որ Եւրոպա հաստատուելէն ի վեր Դաշնակցականները կը քարկոծէ այն նոյն սխալին համար զոր ինքն իր ընկերներով անոնցմէ առաջ գործած էր , իր ընթացքը ինձի միշտ տարօրինակ երեւցած է , եւ ըսած եմ զայդ իրեն յաճախ . անշուշտ Դաշնակցականներու սխալը կրկնապէս ծանր է , քանի որ Եւրոպայի տրամադրութիւնը հրէշային ապացոյցով մը ճանչնալէ յետոյ անոնք միեւնոյն թաքթիքը շարունակեցին ու միեւնոյն ծրագիրը . բայց այդ մեղադրանքն իրենց

ընելու ամենէն քիչ իրաւունքն ունեցողը Արփիարեանն էր , քանի որ ինքն ալ Եւրոպայի տրամադրութիւնները գուշակել կըցած չըլլալու թերութիւնն ունեցած էր եւ ժողովուրդը մղած էր մտնել ճամբու մը մէջ ուր յայտնապէս ջախջախումը կը սպասէր իրեն : Չեմ ծանրանար հոս Արփիարեանի յեղափոխական գործունէութեան «արտաքին» պակասութիւններուն վրայ , ( իր խնդալով , կատակելով , գրեթէ զրօսնելով յեղափոխութիւն պատրաստելը , Պոլսոյ Սըլանտիտին մէջ ապստամբութիւններ սարքելը ) . այդ բոլորը , զոր իր թշնամիները կը վերագրեն դաւաճանական միտումներու , իր նկարագրի հսկայական թեթեւութիւնը կը շեշտեն եւ իր անկարողութիւնը ծանրակշիռ գործերը կրօնական լրջութեամբ մը նկատելու : Այդ «ժամանց»ի սիրահար մտքին համար յեղափոխութիւնը եւ գրեթէ ամէն բան ժամանց մը եղած է ամէն բանէ առաջ : Շատ յաճախ տեսած եմ զինքը Բարիդ , Հնչակեան կազմակերպութեան օտար եղող անձերու առջեւ երկարօրէն պարզել իր Հնչակեան կեդրոնին ներքին կացութիւնը , միամտօրէն դաւաճաւորով որ «դրամ չեն զրկեր կեդրոնին» , իր ընկերները ծաղրել , իր ծրագիրները մէջտեղը փռել՝ կատակաբանութիւններով շրջանակուած , — նկարագրի սկարտութիւններ որոնք Քալինոն կը շեշտեն , Մաքիավելին բաժինը իր մէջ մանրագիտական դարձնելով :

Իր ծրագիրները . . . հարիւրաւճճ են անոնք . ամէն անգամ իրեն հանդիպելուս , տասնհազներով ծրագիր ներկայացուցած է ինձի : Հատ մը չեմ դիտեր սակայն զոր աննականօրէն ձեռք առած եւ իր մտքին , կամքին , խանդին բոլոր ուժերովը յամառօրէն ու հաստատամտօրէն մինչեւ ծայրը իրագործած ըլլայ : Իր ծրագիրները ցնդած են միշտ՝ ամենափոքր արգելքին առջեւ : Մէկ հատը միայն իր ծրագիրներէն , թերեւս միակիւ որուն անկեղծօրէն համոզուած ու յարած էր , թերթ մը հանելու ծրագիրը , այս մեղեւածին յղացումներու շարքին մէջ բացառութիւն կազմած է : Թերթ մը ունենալու մարմաջը Եւրոպա դալէն ի վեր Արփիարեանի հրայրքն էր . եւ այդ իվճը զլիսաւորապէս «լիւմոռութիւն»ին ձգտումներուն գոհացում տալու մղումէն կը բղխէր քան թերթով մը «գործ տեսնելու» ցանկութենէն : Իր տեսչանքն էր օրկան մը ունենալ , ամէն բանէ աւելի իր հին յիշատակներուն տուրբակը անոր մէջ պարպելու եւ իրեն անսխորժ եղող մարդիկը կճելու

համար . «Չես գիտեր , կը դրէր ինձի անգամ մը Լոնտոնէն՝ «Նոր Կեանք»ին հիմնուելէն առաջ , չես գիտեր «ժամանց»ի ո՛րչափ նիւթեր գիզուած են քովս՝ Ներսիսի գաղթս ի վեր . ի՛նչ ցաւալի բան է որ թերթ մը չունիմ : »

Թերթի այս կարօտն էր որ Արփիարեանը մղեց մեղրալուսնի ամիս մը անցընելու այն Նազարբէկին հետ , որուն արդէն կասկած ներշնչող վարմունքներուն մասին քննութիւն մը կատարելու պաշտօնով Պոլսոյ Հնչակեանները գինքը Լոնտոն զրկած էին : Փոխանակ քննութիւն կատարելու , Արփիարեան , զոր Նազարբէկ պաշարեց ամէն տեսակ փաղաքշանքներով , անթերի դտաւ եւ մեղի աշղպէս ներկայացուց այդ «կեդրոն»ը , որովհետեւ այնտեղ իրեն կը բացուէին «Հնչակ»ի սիւնակները ուր պիտի կարենար իր «ժամանց»ի ծարաւը յագեցնել եւ ուր իր առաջին գրածը Արբաճամ փաշային վրայ «ժամանց» մը եղաւ : Մեղրալուսնիւր աւարտեցաւ Արփիարին արտաքսումովը . զայն «գործածելէն» յետոյ , Նազարբէկ նկատեց որ աւելորդ էր քովը պահել մարդ մը որ շատ խոշոր տեղ մը կը բռնէր իր խանութին մէջ , եւ ճամբու դրաւ զայն : Չուարճալին այն է որ այդ խոշորի պատմութեան մէջ առանց ուղեւոր մաս ունեցած եմ : Արփիարեան ինձի զըրկած էր Նազարբէկի բանաստեղծութեանց հաստը , — իր կնոջը նուիրուած սիրատենչ քերթածներու լըրճուկ փնջիկ մը՝ զոր արիւնի ու սուղի օրերու մէջ այդ չարագուշակ քաւորթէնը կը հրատարակէր Հնչակեան գրամով , — եւ Արփիարեան զմայլումի տողերով կ'ընկերացնէր ուղարկը . իրեն գրեցի որ Նազարբէկի ոտանաւորները ոգորմելի էին ինձի համար եւ անոնց հրատարակումը անիմաստ : Կ'երեւայ թէ այդ սրբապիղծ նամակս սիրաբորբոք յեղափոխականին ձեռքն անցեր է . եւ այդ օրէն Նազարբէկ — Արփիարեանի իսկ ինձի պատմածին համեմատ , — պաղ վարուել սկսեր է Արփիարեանին հետ՝ որ իր ոտանաւորներուն չհաւնող անձի մը հետ յարաբերութիւն ունենալ համարձակեր էր :

Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան մէջ , Արփիարեան , որ ընդունեցաւ զերագոյն վարիչի պաշտօնը , ոչինչ ըրած է մինչեւ այսօր որ «գործ» կարենայ կոչուիլ : Այն մէկ քանի գովելի ջանքերը որ այդ կուսակցութեան նախաձեռնութեամբ կատարուեցան վերջին երեք տարիներուն մէջ , Արփիարեանի մղուածով չէ որ տեղի ունեցած են . Չէյթունի ինը-

պատ հանգանակութիւնը , զոր «Տիգրիս»ը բացաւ , Ամերիկայի գործիչներուն անձնական յղացման ու գործադրութեանը կը պարտէինք , ինչպէս եւ Ամերիկայի Հայոց վերջինս՝ յնքան շահեկան Համաժողովը , որ Ամերիկայի գործիչներուն ուշիմ եռանդին արդիւնքն է լոկ . Արզուեանի եւ Քոչեանի Պուլիս երթալը՝ հետեւանքն է ծրագրի մը զոր այդ երկու գործիչները անձնապէս յղացած էին եւ որուն պործագրութեան համար Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը ուրիշ բան չըրաւ բաց եթէ նիւթական միջոցները հայթայթել :

Նազարբէկի կեդրոնը ահագին թերութիւններ ունէր , բայց , — անկարելի է ուրանալ , — խոշոր աղիւցութիւն մը կազմած էր , նիւթական ու բարոյական ուժ մը ձեւացուցած էր , որ Ներսիսի մէջ ծանօթ էր եւ հաշուի կը դրուէր Տաճկաստանի մէջ . ու պահ մը մեծ վարկ ունեցաւ թէ՛ Հայոց թէ՛ Տաճկաց աչքին : Այդ ուժը շատ գէշ գործածուեցաւ , բայց ուժ մըն էր : Արփիարեան ու իր կեդրոնը , որ Նազարբէկին կեդրոնը իւրացուցին , պարտաւոր էին ո՛չ միայն պահպանել այդ ուժը , այլ եւ՝ իրենց դերազանցութիւնն ապացուցանելու համար՝ զայն «գործածել» աւելի ուշիմ եղանակով մը : Արդ , Արփիարեանի կելրոնը ոչ միայն ոչինչ կրցաւ ընել այդ ապացոյցը տալու համար , այլ եւ նոյն իսկ անկարող եղաւ այդ արդէն կազմուած ուժը նոյնութեամբ պահպանելու : Նոր կեդրոնին կազմուածքը կը բաւէր զինքը յաւերժական անչարժութեան դատապարտելու համար : Կեդրոնը կը կազմուէր հինգ անձերէ որոնցմէ իւրաքանչիւրը երկրիս հինգ մասերէն մէկուն մէջ կը բնակի , եւ գործ մը որոշելու համար այդ անձերը չորս ամիս թըղթակցութեան պարտաւոր էին եւ կամ յաճախ , — ինչ որ թերեւս աւելի ձախորդ միջոց մըն էր , — գործին վարումը ամբողջութեամբ իրենց Լոնտոնի ընկերոջ յանձնելու :

Արփիարեանի կեդրոնը մեծազորք խոստումներ ըրաւ նոր ուղղութիւն մը սկսելու , ապին բոլոր հատուածները միեւնոյն դրօշին ներքեւ միացնելու , զիւանագիտական գործունէութիւն մը ձեռնարկելու , Հայերը Ներսիսին ճանչցընելու գործը ընդարձակօրէն ու զօրեղօրէն վարելու : Այս խոստումներէն եւ ոչ մէկը կըրցաւ կատարել : Այս ճամբով մէկ քանի տարիէ ի վեր կատարուած բոլոր ճիգերը գործն են կա՛մ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան չպատկանող անձերու , եւ կա՛մ Լոնտոն

չբնակող մէկ քանի Հնչակեաններու . Գիտեմ որ Արփիարեան քանի մը յորձ ըրած է՝ իր կուսակցութեան հետ կապելու համար ոչ յեղափոխական ինչ ինչ կարելոր տարրեր . բայց այդ փորձերը բացարձակապէս անյաջող են եղած կա՛մ կիսկատար ու ամուլ արդիւնքներու յանդած են . իսկ իր դիւանագիտական ձեռնարկներուն խօսքը չեմ ըներ . ընդամենը հինգ կամ վեց տեսակցութիւն ունեցած է Արփիարեան, եւրոպացի, հայ կամ թուրք անձնաւորութիւններու հետ, եւ անոնց ինչ տեսակ բան ըլլալը զիտեմ, որովհետեւ մեծ մասին ներկայ գտնուելու պատեհութիւնը ունեցած եմ . իր ամենէն յաջողած «ժամանց»ները չեն հաւասար իր այդ տեսակցութիւններուն զաւելչտականութեանը . Մուրատ պէյին հետ տեսակցութեանը մէջ, «Սահմանադրութիւն մը բռններ անցեր էք, կ'ըսէր խնդալով, ի՛նչ ըլլալը չենք գիտեր, տուէք մէկ մը կարգանք ձեր ծրագիրը .» — «Պարոն, պատասխանեց Մուրատ պէյ արհամարհոտ շեշտով մը, Միդհատի սահմանադրութիւնը տպուած է, արդէն ճանչնալու էիք զայն, Բարեզի Ազգային Մատենադարանը գացէք կարգացէք .» : Նուպար փաշայի հետ խօսակցելով, այնչափ այլանդակ ու նողկալի մանրամասնութիւններ կուտակեց հայ քոմիթէներուն ներքին պատմութիւններէն որ «ինձի փափաք կուտաք կոր բոլորովին ձեռք քաշելու այս ազգէն» ըսաւ Նուպար զղուած (եւ Արփիարեան գացած էր Նուպարը խանդավառելու իր կեդրոնին համար . . . ) :

Եւ սակայն ո՛րքան բան կար ընելու Վեր . Հնչ . կուսակցութեան համար՝ այդ նոր ուղղութեամբ, որուն առաջին հիմունքը Վեր . Հնչ . կուսակցութեան չպատկանող անձեր զրին : Իրենց անձնական ուժերուն վրայ միայն կըրթնող անհատները ստիպուած էին իրենց գործունէութիւնը սահմանափակել համեստ շրջանակի մը մէջ . կուսակցութիւն մը որ ունէր միջոցներ, եւ որմէ կախեալ էր այդ միջոցներն ընդարձակել եւ ամրացնել, կրնար շատ ընդարձակ սահմանի մը մէջ այդ գործունէութիւնն իրականացնել : Այդ կուսակցութիւնը կրնար պաշտօն յանձնել իր անդամներէն ոմանց՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ արեւելեան հարցով զբաղող բոլոր անձնաւորութեանց հետ մշտական յարաբերութիւն հաստատել եւ անոնց մէջ միշտ վառ պահել համակրութիւնը հայկական դատին համար . կրնար միեւնոյն աշխատութիւնը սկսիլ Գեր-

մանիոյ, Աւստրիոյ եւ Իտալիոյ մէջ, ուր գրեթէ ոչինչ ըրած ենք մինչեւ հիմա . կրնար Հայոց ներկային ու անցեալին վրայ բանախօսութիւններու շարք մը սարքել եւրոպայի ամէն կողմը, ջանքեր ընել արթնցնելու համար Հունգարիոյ, Ռումանիոյ, Բոլոնիոյ օտարացած Հայութիւնը, որուն մէջ մեզի համար անսահման ուժ մը կայ թաքուն, եւ զայն կապել հայրենասիրական գործին . կրնար լուրջ բանակցութիւններ սկսիլ թուրք կառավարական շրջանակներուն հետ (գործ մը գոր Արզուեան եւ իր ընկերները կատարեցին՝ Վեր . Հնչ . կուսակցութիւնէն անկախաբար) . յարաբերութիւններ հաստատել կարգ մը թրքահպատակ ուրիշ դժգոհ ցեղերու, մասնաւորապէս Բիւրաերու, ներկայացուցիչներուն հետ (փոխանակ մէկ գրչի հարուածով վանոնք Հայոց վերջնապէս թշնամի կացուցանել ջանալու) : Այս բոլորը կրնար, եւ պարտաւոր էր, ընել նոր կեդրոնը, որ Նազարբեկեան կեդրոնէն եւ Դաշնակցական կուսակցութեանէն տարբեր, աւելի լայնամիտ ու դիւանագիտական գործունէութիւն մը ձեռնարկելու խոստումը ըրաւ ազգին : Այս բոլորը չըրաւ Արփիարեանի կեդրոնը :

Բարեզի Յուցահանդէսին ինչպէս եւ Լահէի Դեսպանախորհուրդին միջոցին, — երկու մեծ առիթներ որ ա՛յնքան պատեհ էին հայկական բրորականաին համար, Արփիարեանի կեդրոնը բացարձակ անշարժութիւն պահեց, (մինչդեռ Դաշնակցութիւնը, որ իր գործունէութեան ծրագիրն ընդարձակելու եւ բարեփոխելու ակներեւ ջանքեր կ'ընէ ատենէ մը ի վեր, այդ ուղղութեամբ գնահատելի ձեռնարկներ փորձեց) : Լոնտոնի պէս հայկական խնդրոյն համար ահազին կարեւորութիւն ունեցող քաղաքի մը մէջ բնակելով հանդերձ, Արփիարեան ոչ մէկը մօքէն անցուցած է ձեռնարկել այն բոլոր գործերէն որ կան այնտեղ կատարելու . վստահաբար, Լոնտոնի մէջ՝ Արփիարեանի կեդրոնին գոյութիւնն իսկ անծանօթ է ամենուն :

Արփիարեանի կեդրոնը ո՛չ կրցաւ իր շուրջը պահել Հնչակեան շատ մը գործիչներ որոնք՝ այդ կուսակցութեան հետ խորունկ կապեր ունենալնուն հակառակ՝ չուզեցին անոր մէջը մնալ, ո՛չ ալ նոր ուժեր կրցաւ իրեն կցել . եւ ասի՝ զլիաւորապէս՝ մարդու հետ վարուել չգիտնալու, ամէն բան կատակի ձեւով նկատելու թերութեանը համար որ Արփիարեանին յատկանիչն է : Այսպէս Արփիարեան ձանկիւլեանը մինչեւ եօթներորդ երկինքը բարձրացուց՝ բանաւէն ելլելուն, յետոյ՝ տղայական կռիւներու հետեւանքով՝ զայն

դետնէ գետին դարկաւ եւ տեղի տուաւ զազիր  
 դայթակղու թիւններու որոնք կրնային չպա-  
 տահիլ՝ եթէ Արփիարեան վարուիլ գիտցած  
 ըլլար ճանկիւլեանին հետ : Ճանկիւլեանը  
 «հիւանդ» մըն էր պարզապէս, որուն հետ պէտք  
 էր վարուիլ խնամոտ գթութեամբ մը, եւ զոր  
 բնաւ պէտք չէր ուռնցնել հոնաորական  
 ծայրայեղութիւններով : Սրփիարեան, բազ-  
 մամեայ բանաբարութեան մը մէջ խանգա-  
 րուած այդ մտայնութիւնը չափազանց փա-  
 տաւորութեամբով գերազդեցիկ էտքը՝ անոր  
 հետ մէկ քանի ամսուան ողբերգա-զաւեշտաւ  
 տական կենակցութիւն մը ունեցաւ, յետոյ  
 անոր յանձնեց շատ փափուկ գործ մը որուն  
 մարդը չէր ան, եւ այդպէս այդ խեղճ ան-  
 գիտակիցը մղեց գլուխի կիրքերու գործիքն  
 ըլլալու, գործիք մը որ աւելի արգահատան-  
 քի արժանի էր քան զայրոյթի : Ճանկիւլ-  
 եանէն, — որուն պատմութիւնը շատ նշա-  
 նակալից ըլլալուն յիշեցի — շատ աւելի կա-  
 րուոր անձեր հեռացան այդ կեդրոնէն, կամ  
 զոնէ անջատուցան Արփիարեանէն մասնա-  
 ւորապէս : Կործակցութեան փորձէ մը յետոյ,  
 հիմա Արդուեան ու Քոչեան ալ բաժնուած են  
 Արփիարեանէն, իրենց լուրջ գործիչի նկարա-  
 րագրին հետ անհաշտ գտնելով այդ քառուկէ  
 մարդը : Այդ կեդրոնը նոր ուժեր չկցեց ի-  
 րեն՝ ըսի : Կը բաւէ յիշել մէկ օրինակ մը :  
 Մեծ ուժ մը կար հրապարակին վըրայ, Տիգ-  
 րան Երկաթը : Հիւանդութեանն արդէն ծիւ-  
 րած այդ տղան, ժամանակէն առաջ քայ-  
 քայուեցաւ ու փճացաւ՝ գլխաւորապէս աղքա-  
 տութենէն զգեսնուած, եւ իր փառաքններէն  
 շատերը չկրցաւ իրագործել՝ միջոցներու պա-  
 կասէն կաշկանդուած : Արփիարեանի կեդրոնը  
 որ մօտէն կը ճանչնար զայն եւ կ'ըմբռնէր ա-  
 նոր արժէքը, մտքէն իսկ չանցուց ո եւ է գիւ-  
 րութիւն ընծայել այդ սքանչելի գործիչին  
 որ այնքան զեղեցիկ բաներ պիտի կրցած  
 ըլլար գեռ ընել՝ եթէ իրեն աջակցող մը եղած  
 ըլլար (եւ այս պարագային՝ նոյնքան յանցա-  
 ւոր են Դաշնակցականներն ալ) :

Արփիարեանի կեդրոնին միակ գործը եղաւ  
 «Նոր կեանք»-ի եւ «Մարտ»-ի հրատարակումը,  
 այսինքն Արփիարեանի անձնական գլխաւոր  
 բաղձանքին իրականացումը : Արդ, նոյն իսկ  
 այդ երկու թերթերուն հրատարակման գործին  
 մէջ, Արփիարեանի կեդրոնը չէ բռնած խոս-  
 տումը զոր տուաւ ազգին : Այդ երկու թեր-  
 րթերուն մէջ անշուշտ երեւցած են էջեր որոնք  
 հայ գրականութեան զեղեցկագոյններէն են,

ինչպէս Զարթուեանի շարք մը յօդուածները,  
 յղկեալ ոճի տիպարներ : Արփիարեան այնտեղ  
 ունի բազմաթիւ յօդուածներ, քրոնիկ, ժա-  
 մանց եւ քաղաքական ուսումնասիրութիւն-  
 ներ, որոնց զաղափարներէն շատերը վիճելի են  
 բայց որոնք շահեկան են գրական տեսակէտով եւ  
 երբեմն ուշադրաւ իրենց պարունակած տեսու-  
 թիւններուն ինքնատու թեմքը : Բայց Վեր-  
 Հնչակեան կուսակցութեան օրկանէն «գրական»  
 գործունէութիւն մը չէ որ կը սպասէր ազգը :  
 «գործ» կը սպասէր, եւ Արփիարեանին ժամանց-  
 ներն ու քրոնիկները եւ Զարթուեանին ամ-  
 բողջ շիք արձակը՝ որ կը հաղուեցնէ նիւթեր  
 որոնք ո եւ է նորութիւն, ո եւ է նախաձեռ-  
 նութիւն, ո եւ է գրական ծրագիր չեն պա-  
 րունակեր, — գործ չեն կրնար համարուիլ, այլ  
 տաղանդաւոր արիւթանթէներու զեղեցկագի-  
 տական ինքնագոհացումներ : Միակ փորձը զոր  
 «Նոր կեանք»ը ըրաւ գործ մը տեսնելու, Զար-  
 թուեանին «անքէթ»ն էր հայ ժողովրդին բա-  
 րոյակաւ անկումին վըրայ, եւ այդ «անքէթ»ը  
 — որ արդէն բարոյախօսի, ընկերաբանի ձեռ-  
 նարկ մըն էր՝ եւ ոչ յեղափոխական գործիչի-  
 բացարձակ ձախողում մը եղաւ, քանի որ ոչ  
 մէկը, ոչ իսկ Վեր. Հնչակեան մը, չպատասխանեց  
 մէջտեղ դրուած հարցին : Զուտ յեղափոխա-  
 կան տեսակէտով, «Նոր կեանք»ն ու «Մարտ»ը  
 անիմաստ հրատարակութիւն մը ձեւացուցած  
 են, աւելի ժխտական քան հաստատական : Ար-  
 փիարեանի բոլոր շանթերը՝ բուն միջոցնե-  
 րով գործունէութեան դէմ, — մասնաւորապէս  
 Դաշնակցականներու թաքթիքին դէմ, — ան-  
 բնական ու կեղծ են երեւցած անձի մը բերնին  
 մէջ որ միեւնոյն թաքթիքն անձամբ ի գոյժ  
 դրած է եւ՝ իր անձնական սխալը չու-  
 պելով խոստովանիլ՝ այսօր միայն ուրիշները  
 կը դատապարտէ միեւնոյն ընթացքին չա-  
 բունակութեանը համար : Չեմ ծանրանար այն  
 ծիծաղելիութեան վըրայ որ յառաջ եկած է յե-  
 ղափոխական ապագայ զարհուրելի պատրաս-  
 տութիւններու մեծաղղորդ ծանուցումներէն  
 որոնց երբեք գործ մը չէ եկած իրականու-  
 թիւնը հաստատել : «Նոր կեանք»ը մեծ թե-  
 րութիւնն ալ ունեցած է ահագին տեղ մը տա-  
 լու երկրիմանքին, յեղափոխական օւկան մը  
 պէտք է ամէն բանէ առաջ ժողովրդին խանդն  
 ու հաւատքը բորբոքելու ջանայ : Արփիարեա-  
 նի բոլոր ժամանցները, որքան ալ սիրուն ըլ-  
 լան գրական տեսակէտով, իրենց տեղը չէին

յեղափոխական կուսակցութեան մը պաշտօնաթերթին մէջ, նմանապէս իրենց տեղը չէին հոն՝ Երօտ-Վահրամի բոլոր երգիծանքները. «Յեղափոխութեան մակարոյժ»ներուն շարքը, զոր Երօտ հրատարակեց «Նոր Կեանք»ին մէջ, մեր արդի գրականութեան ամենէն հոյակապ հրաշակերտներէն մէկը կը կազմէ. բայց «Նոր Կեանք»ը ինչու այն չըջանակը չէր ուր այդ բացասական գրականութիւնը կրնար երևալ : Երօտ անկախ դիտող մըն է, որուն գործն է՝ իր խառնուածքին ու տաղանդին բնական բերումովը՝ իրերուն ու մարդերուն պզտիկ, ծիծաղելի, յաժ կողմերը տեսնել ու լոյսի մէջ գնելով խայտառակել : այդ գործը, ինքնին գերազանցօրէն գովելի եւ օգտակար, կրնար կատարուիլ անկախ գրական թերթի մը մէջ, առանց ու եւ է թիւրիմացութիւն յառաջ բերելու. բայց յեղափոխական օտկան մը որ կը հրատարակէր յեղափոխականներու «բաղդասնդիր», «խառնութեան», «խաչագող» կողմը ներկայացնող այդ ծաղրանկարները, իր պաշտօնին դէմ հակասած կ'ըլլար : Իրտեմ որ կրնան առարկել թէ Երօտի էջերը միմիայն Դաշնակցականներուն դէմ ուղղուած ըլլալու ձեւն ունին եւ ոչ թէ ամբողջ յեղափոխական մարմինն : Բայց ասի խեղաթիւրում մըն է հեղինակին մտածումին դէմ, որ յառաջ կուգար այդ յօդուածներուն «Նոր Կեանք»ին մէջ կրեւումէն : Երօտ իր յղացումներուն մէջ ու եւ է կուսակցամոլութիւն չէ ունեցած երբեք : Իր սուտ յեղափոխականները, իր խաչագող հերոսները Հնչակեան ալ կրնան ըլլալ իր մտքին մէջ որքան Դրօշակեան : «Նոր Կեանք»ը պէտք չէր որ օգտուէր աշխատակցի մը տաղանդէն՝ գայն հակառակորդ կուսակցութեան մը դէմ չէնք դարձնելու համար : «Նոր Կեանք»ի խմբագրութիւնը եթէ ճշմարտապէս յեղափոխական ոգի ունենար, պիտի խնդրէր Երօտէն որ իրեն տայ շարք մը ծաղրանկար՝ հայ էֆէմտիներուն, հայ թրքամոռններուն, հայ չէզոքներուն, հայ ախրացուներուն, հայ «ստրուկ»ներուն վրայ—միակտիպարները զոր յեղափոխական օրկան մը պարտք ունի ձագկելու :

«Նոր Կեանք»ին ու «Մարտ»ին մէկ խոչարթիւրութիւնն ալ Դաշնակցութեան դէմ իրենց մղած պայքարը եղաւ, այնքան անազնիւ որքան եղած էր Դաշնակցականներուն պայքարը Արփիարեանի, «Հայրենիք»ին ու Հընչակեան կուսակցութեան դէմ : «Անահիտ»ի ընթերցողները գիտե՞ թէ ի՞նչ կարծիք ունիմ Դաշնակցութեան յեղափոխական գործունէութեան մասին ընդհանրապէս, եւ Մեծ Հայաստանի մէջ անոր ձեռնարկներուն մասին մաս-

նաւորապէս : բայց այդ գործունէութեան «արխալ հաշիւ»ը երբեք չեմ չիտթած գիտակից գաւաճանութեան մը հետ (ասի նախատինք մը պիտի ըլլար ամբողջ հայ աղջին երեսին նստուած) : Արփիարեան կրնար քննադատել այդ գործունէութիւնը, բայց իրաւունք չունէր յեղափոխական մարմնոյ մը օրկանին մէջ ամբողջ Դաշնակցութիւնը ներկայացնել իբրեւ դիտակից գործիք մը որու կառավարութեան շահերուն նուիրուած (եւ ասի՝ օղային ենթագործութիւններու վրայ հիմնուելով, առանց ու եւ է փաստով իր այդ անբաստանութիւնն արգարացնելու) :

Այս բոլորը ցոյց տուած են ինծի Արփիարեանը՝ անկարող յեղափոխական վարիչ մը ըլլալու : Եւ այս տպաւորութիւնը իրեն յայտնած եմ հարիւր անգամ, իրեն՝ ինչպէս եւ ոեւէ Հայու, — Դաշնակցական, Հնչակեան, կամ չէզոք, — որ այս վերջին երեք տարուան միջոցին կարծիքս հարցուցած ըլլայ Արփիարեանի եւ վեր. Հնչ. կուսակցութեան մասին : Մինչեւ հիմա հրատարակաւ այս կարծիքս չյայտնելուս պատճառները բացատրեցի արդէն : այդ պատճառները հանրային կարգի կը պատկանին ամբողջ, եւ կը բղխին փափկանկատութենէ մը զոր թերեւս ծայրակցութեան տարած եմ : կրնան ինծի մեղադրել վերապահումներս շատ ու շերեւան հանելս, բայց ոչ մէկը պիտի կարենայ գայդ յապաղելուս շարժառիթներուն ազնուութիւնը վէճի տակ գնել կամ հիմա դանոնք հրատարակելս վերագրել անձնական պատճառներու, որոնք գոյութիւն չեն կրնար ունենալ ինծի համար : Տարիէ մը ի վեր այս բոլորը հրատարակաւ ըսելուս զլիաւոր արգելքներէն մէկն ալ եղած են կարգ մը անձեր, զոր կը յարգեմ, — Արզուեան, Եանաղար, Երօտ, եւն, — որոնք կը յուսային որ թեւրութիւնները պիտի սրբադրուէին առանց ազմուկի : թէ լաւագոյն էր թողուլ որ վեր. Հնչ. կուսակցութիւնը ինքնին ինքզինքը վերանորոգէր եւ իր պակասները լրացնէր : Արգելքներէն մէկն ալ Արփիարեանի անընդհատական խոստումը եղած է «հրաժարելու» : Ամէն անգամ որ յեղափոխական վարիչի դերը կատարելու իր անկարողութեան մասին կարծիք յայտնուած է իրեն իմ կամ ուրիշներու կողմէ, Արփիարեան միշտ համաձայն ցուցուցած է ինքզինքը այդ կարծիքին, եւ յայտարարած է թէ մտադիր է քիչ օրէն «քաշուիլ», եւ երեք չորս անգամ ալ իրօք հրաժարական տուած է : բայց իր հրաժարականները ներսէս Պատրիարքին հրաժարականներուն կը նմանին, այսինքն «ձեւի համար» հրաժարականներ են : լրջօրէն հրաժարիլ ուղող մարդը իր հրաժարականը կուտայ եւ կը քաշուի, ուրիշ կեանք

մը կը սկսի եւ առանց ո եւ է թախանձանքի  
այլ եւս ազանջ դնելու՝ իր հրաժարման մէջ  
կը մնայ անխախտ եւ անփոփոխ: Արփիարեանի  
հրաժարականները, արատաւաթոր եղբեր-  
գութեան մը շեշտերովը գրուած, միշտ ուզած են  
ըսել իր ընկերներուն՝ «Ո՛հ, կը բաժնուիմ ձեռնէ  
անհուն կակճանքով, եւ չէք դիտեր ինչպէս կը  
կը տառապիմ ձեռնէ գատուելու. . .»: բնակա-  
նաբար հրաժարականը միշտ մերժուած է, եւ  
Արփիարեան միշտ հաւանած է իր պաշտօնին  
վրայ մնալ վերստին:

Այսպիսի կացութեան մը առջեւ, աններելի  
պիտի ըլլար լուծիւն պահել այլ եւս: Պէտք  
էր ը վերջապէս ամբողջութեամբ ըսէի ինչ որ  
միջանկեալ ֆրազներով մինչեւ հիմա արտա-  
յայտած եմ քանի անգամ, այսինքն թէ Արփիար-  
եանը մասնութիւն գործելու անկարող համա-  
րելէս ոչ ոք պէտք չէ որ հետեւցնէ թէ վինքը  
յեղափոխական վարիչի տիպար մը նկատած եմ:

Այս բոլորը ըսելու սրոյձանս կարեւոր շար-  
ժանութ մըն ալ կը ձեւացնէ այն այլանդակ  
վարմունքը զոր Արփիարեան ունեցաւ՝ գեո  
այս օրերս՝ Գոհեանին, Արզուեանին ու Պոլիս  
այս վերջնոյն ընկերացող ֆրանսուէրին հան-  
դէպ Ոչ ոք կրնայ երեւակայել թէ «Նոր կեան-  
ք»-ին մէջ խանդավառ փառաբանումներով այդ  
երկու գործիչները դրուատող անձը իրականու-  
թեան մէջ ի՛նչ ընթացք բռնած է անոնց նկատ-  
մամբ՝ երբ կամովին յանձն առնուած չարչարանք-  
ներէն ելած եկան եւրոպա. եւ ոչ ոք կրնայ մտքէն  
անցընել թէ դանձր իրրեւ Հայութեան Ուժին  
պատկերացումը ներկայացնող Արփիարեանը  
Հնչակեան կուսակցութեան չպատկանող անձե-  
րու առջեւ ի՛նչ հրէշային, ի՛նչ գժուձ ու դռնիկ  
չարախօսութիւններ թափած է անոնց վրայ, ա-  
նոնց գերը ստորնացնելու եւ դէմքը անարտելու  
համար. . . Այդ ընթացքը ինձի յայտնեց Արփի-  
արեանի մէջ մէկ քանի շատ անձոտնի գծեր զոր  
չէի տեսած մինչեւ հիմա: Հակառակ իր բոլոր  
մտքի եւ նկարագրի թերութիւններուն, հակա-  
ռակ նոյն իսկ իմ անձիս նկատմամբ իր զենցած  
կարգ մը անշնորհք ու տղեղ վարմունքներուն,  
իր արիւարին խորքը ուղած էի ազնիւ նկատել, եւ  
ատկից կը բղխէր զլիսա սրապէս իմ ներողամտու-  
թիւնս իր պակասութիւններուն համար: Վերջին  
միջադէպը ինձի հոյս կոտայ անզգայ եւ Յամմիլ  
կատակող մը, անպարտաճանաչ, նենգ, եր ոչ իր  
պաշտօնին ծանրութիւնն ու վեհութիւնը զգալ  
զիտէ, ոչ յարգել իրական գոհողութիւններու  
կարող եղած անձերը, եւ որ ամբողջ վեր: Հնչակ-  
սակցութիւնը կը նկատէ իբրեւ կթալն կով մը  
«Նոր կեանք»-ին, այսինքն իր խանութիւն համար:  
Այս պայմաններուն մէջ «Նոր կեանք»-ի խմբա-  
դրապետին դէմքը ինձի կ'երեւայ իբրեւ մին աչն  
դէմքերէն զոր երօտ գծեց իր «Մակարո յնչերոտ»

հզօր շարքին մէջ, եւ հիմա ո եւ է խղճահարութիւն  
չի մնար այլ եւս ինձի՝ ամբողջ մաքածոս յայտ-  
նելու գործիչի մը հանդէպ որ չի գործեր, այլ  
թերթի մը մէջ անզաւարուած իրերն ու մար-  
դիկը ապրուստի եւ զբօսանքի առարկայ կը դար-  
ձընէ իրեն:

Այս երբ Արփիարեանը զոր այս վնասին առ-  
բորին սպէս թելադրական միջադէպին մէջէն  
տեսայ՝ պիտի ըսէ: «Ինչո՞ւ, որ այս բոլորը կը  
դրեմ. . . իր տեղը բռնելու համար: Այսպիսի  
շոշորութիւն մը քրքիջ միայն կրնայ ներ-  
շնչել՝ ոչ միայն ինձի այլ ամենէն կատարի  
հակառակորդներու ինկ: Եթէ ո եւ է կուսակ-  
ցութեան մէջ պաշտօնի մը ուզած ըլլայի ընդու-  
նիլ, եթէ ո եւ է մարմնի «Ողտուսը» մէկ  
անգամ ըլլալ եւ ազգային խնշրով գրաւել  
ինձի «գործ մը ընել» հաճած ըլլայի, մինչեւ  
հիմա ըրած էի այդ բանը. առիթները չեն, որ  
պակասած են, ոչ ալ հրաւերները՝ ա՛յն կողմէ:  
Ես պիտի մնամ միշտ իմ անկախ գործիչի ան-  
կիւնիս մէջ եւ պիտի պահեմ՝ զանգափարի մը  
սիրոյն համար յայցարձակ անշահախնդրու-  
թեամբ գործող մարդու հարստութիւնս, ինչպէս  
եւ իմ իրաւունքս բոլոր ազգային մարմիններն,  
անհասանքն ու արաքքները անկախօրէն  
քննադատելու: Այս յօդուածս գիտողի մը ար-  
պաւորութիւնն է, անպառ վերլուծում մը, —  
եւ ինչ ալ կազկանձեն այս կամ այն կողմէն՝  
չարա ինտ ու գժր. ձ մտքերը, ես վստահ եմ որ  
ասով տղիւման մէջ կազմած պիտի ըլլամ՝  
որուն պիտի դիմէ վաղուան սերունդը, երբ  
Արփիար Արփիարեանի հոգեբանութիւնը ու-  
սումնասիրել ուզէ:

ԿՐՇԱԿ 209 ԱՆՆՆ

Թ. Գ. — «Նոր կեանք»-ի սեպտ. 15ի թուոյն  
մէջ, զոր ընդունեցայ վերջին պահուն, ակ-  
սայ յօդուած մը «Մեզք կը նային» տիպոսով,  
ուր Արփիարեան իմ մտքս ամենէն ծիծաղաչարժ  
լըրճուկութիւնները կը սողոսկեցնէ, առանց  
ինչչէն քրդական հարցին մէջ անուսնա հա-  
մարձադորէն յիշելու: Այդ յօդուածը ուզիչ բան  
չ'ըներ բաց փթէ՝ սպաղիզեցնել, հրապար-  
կային անյայտի յտակութեամբ մը: Ինչ որ  
ըսած եմ Արփիարեանի մասին՝ իմ ուսումնա-  
սիրութեան մէջ՝ Արփիարեան կայ հոն, թե-  
թեանութիւն, անբխօթութիւն, չարութիւն,  
ակամարտութիւն, պատուութեան շահելուն զա-  
տարակուսման յետոյ անբնական լի պատկեր-  
մը: Կը տեսնե՞ք նորեկ պահան Արփիարեան մը՝  
հաւանդիսով փնտրող փարկուրայի (Կ) մը վրայ  
արեւուփն ու վերջապէս Արփիարեանի կողմէ  
խմբագրուած բարեկեան համակ մը: Երբ իմ  
յօդուած կը հրատարակու մին, հեռագրի մը փա-  
մանու մէջ (Կ) փախեալ ըլլալուն «ժամանց»-ական  
հրաչալի զիտուր կը չնչայն. . .

Իր վրայ ըսէ յօդուած մը գրելու անպարտութիւնս  
տարտաւառ փնտրայ իբրեւ զոր չի մը միջոցով  
հարկաւ չի ստացած: Արփիարեան՝ արդ պարզ դիտու-

ւորութենէս իրար անցած, առանց սպասելու յօրուածին երեւմանը, առանց ուղիւու գիտնալ թէ ի՞նչ կը պարունակէր յօրուածս, խոտվեալ նամակներ տեղաց վրաս՝ հարցնելու համար թէ ճշմարիտ է որ «Անահիտ»ին գոյութիւնը ապահովելու նպատակով դաւ մը կը սարքեմ կոր եղեր Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը կործանելու եւ տեղը նոր մարմին մը հիմնելով՝ «Անահիտ»ը անոր պաշտօնաթերթը վարձընելու համար: Բնականաբար ոչ մէկ պատասխան տալ չզիջայ այսպիսի զազիր դիտաւորութիւններ ունենալու զիս երկվայրկեան մը կարող կարծել յանդիմանող անձի մը: Հիմա, «Նոր Կեանք»ի խմբագրապետը, առաջուց կը փորձէ պատասխանել իմ յօրուածին: Եւ հակառակ «հաւատալ չուզելու» իր կեղծաւոր վեհանձնութիւններուն եւ անունս չյիշելու երկզիմի զգուշաւորութեանը, իր յօրուածը ուրիշ նպատակ չունի բաց եթէ՛ ինձի վերաբերելով շահամուտական զգուելի նկատումներ՝ նախապէս կոտորել ազգեցութիւնը զոր յօրուածս պիտի կարենայ ունենալ հանրային կարծիքին վրայ: Վերջին դէպքերուն մէջէն ինձի յայտնուած Արփիարեանէն ես կը յուսայի. վատահօրէն կը սպասէի այս աղտոտ դէնքին գործածումը — որ զինքը հիմա միեւնոյն կարգին վրայ կը դնէ իրեն դէմ մատնչութեան պատմութիւնը հնարող «Հրանդ»ներուն հետ, — եւ յօրուածիս մէջ արդէն պատասխանած էի այդ տղայական որքան գարշելի մեկնութեանը զոր նախատեսած էի թէ Արփիարեան պիտի տար իմ այս ուսումնասիրութիւնը գրելու արարքիս: Ինքնին՝ Արփիարեանի գրածը յօրուածիս վրայ բառ մը աւելցնելու պէտք չ'ըզացներ, բայց մէկ քանի կէտեր կան այդ յօրուածին մէջ, որոնց լուսարանումը, թէպէտ աւելորդ, անշահեկան պիտի չըլլայ: Նախ այդ «Նոր Կեանք»ը կործանելու եւ անոր տեղը «Անահիտ»ը դնելու ապուշ հէքեաթը ինձի կը թուի հնարում: Արփիարեանին եւ իր մէկ քանի բարեկարակ արքանեակներուն ուղեղէն: Արփիարեան որ զիս շատ լաւ կը ճանչնայ, կրնար ինձի վերաբերել ուրիշ ամէն թերութիւն բաց իշահախնդրութենէ: Արփիարեան որ զիս երեք անամիս առաջ կը պատմէր թէ ի՞նչպէս Պոլսոյ մէջ ունեցած դիրքս ու հանգստութիւնս իմ կամքովս թողուցի եւ Բարիկ եկայ՝ ազգային դատին համար ամէն նեղութիւն, ամէն անապահովութիւն աչք առնելով, ի՞նչպէս հիմա կը հաւատայ թէ իմ թերթս յաջողցնելու եւ անով ապրուստս ապահովելու գոհիկի նպատակովը կրնամ ամբողջ յեղափոխական կուսակցութիւն մը կործանելու ճգնիլ, եւ ի՞նչպէս մանաւանդ չ'ամչնար սա տողերը գրել — միշտ ինձի ակնարկելով — «Անտք որ ի խոյզ եւ ի խնդիր հացի Եւրոպա ելած են եւ ձեռնուեայն կը մնան, կարող են վերադառնալ Պոլիս ուր ոչ ոք զիրենք պիտի նեղէ», եւ ուր «ոչ ոք զիրենք անպատուարեր յանձնառութեանց պիտի հարկադրէ» եղեր: . . . Այս տողերը գրած

ատեն, Արփիարեան ի՞նչպէս չի տեսներ, եթէ ոչ նողկալութիւնը իր արտայայտած մտածման, գոնէ իր բիրտ հակասականութիւնը: Եւ ի՞նչպէս մտքէն կ'անցընէ զիս հրաւիրել որ Պոլիս դառնամ (ինք որ երեք ամիս առաջ իմ Բարիկ ներկայութիւնս մեծապէս օգտակար կը նկատէր մեր դատին), եւ ի՞նչպէս մանաւանդ այս տարօրինակ յեղափոխական վարիչը կը համարձակի ըսել թէ իմ գործունէութիւնս ունեցած անձ մը Պոլիս դառնալով «ոչ մէկէն չպիտի նեղուի եւ ոչ մէկ անպատուարեր յանձնառութեան չպիտի հարկադրուի»: Արփիարեան չի՞ խորհիր որ մենք մէկուն Պոլիս դառնալու (եւ հետեւաբար Արփիարեանի հինաւուրց մէկ արարքը կրկնելով՝ Սուլթանին «մեղայ» ըսելու) լոկ զաղափարն ունենալը ոչ թէ անպատուարեր այլ մահացուցիչ բան մը պիտի ըլլար: Զպիտի զարմանամ եթէ այդ տողերէն հետեւը նողկներ ըլլան թէ Արփիարեան կ'ուզէ ժողովորդը պատրաստել Պոլիս դառնալու գաղափարին, որպէս զի ի՞նքը գործադրէ զայն երբ պարագաները զինքը հարկադրեն: . . . Եւ պարագաները կարծեմ սկսած են զինքը հարկադրել: Իր շեփորածին չափ ամուր ու հզօր ըլլալէ հետո է իր «կեղբոն»ը՝ Ծիծաղելի չէ՞ք գտներ Սուլթանին դէմ որոտացող յեղափոխական պետ մը, որ կը պարծենայ թէ. . . «Նոր Կեանք»ին յառաջիկայ տարեկանը ապահոված է եղեր. եւ զարմանալի չէ՞ք գտներ որ այդ նոյն «պետ»ը իրեն հպարտութեան սիտողոս մը համարի «կեղբոն»ի մը վարիչն ըլլալով հանդերձ՝ պատառ մը հացի ախր քաշած ըլլալը: Եթէ Արփիարեան գործելու համար Պոլիսը կամովին ձգած անհատ մը ըլլար եւ առանց ո եւ է քոմիթէի պատկանելու ազգատութիւն ու անօթութիւն յանձն առնէր՝ դատին համար, ինչպէս Տիգրան Նրկաթ մը — իր թշուառութիւնը յարգելի պիտի ըլլար անչուշտ. բայց Հնչակեան Կուսակցութեան վարիչ մը համար յանցա՛նք մըն է առանց հասոյթի մնացած ըլլալը, որովհետեւ ատի կը յայտնէ ոչ թէ զոհարեութիւն, անշահախնդրութիւն, եւ ուրիշ աւետարանական առաքինութիւններ որոնցմով Արփիարեան իր ճակատն այնքան հաճոյակատարօրէն կը պսակէ, այլ պարզապէս յոռի վարչութիւն, թոյլ գործունէութիւն, կաղմակերպութեան պակաս, ժողովրդին վրայ ազդելու եւ անկից գործելու համար հարկաւոր եղած նիւթական ու միւրն գունեղութիւն անկարողութիւն, յեղափոխական լուրջ ընկերութիւն մը պէտք է որ գրաւ ունենայ, առանց ատոր՝ աններելի է որ շարունակէ գոյութիւն ունենալ. որովհետեւ «քապոթիւնած» մը կ'ըլլայ միայն իր գոյութիւնը՝ առանց ուժի: Ու երբ կը մտածենք որ Արփիարեանի անձնական վարմունքը մէկն է այն պատճառներէն որ այդ տկարացմանը հասուցին Հնչակեան կուսակցութիւնը, իր մեղապարտ չքաւորութեամբը պարծենցող այդ վարիչը մեղի անիմաստ կ'երեւայ. եւ երբ

հացի պատառ մը դռնելու համար քսան կտոր եղող այդ պէսը իր թերթին մէջ անսուսական տաղնապէ մը տարած օր յետոյ կը գոռայ թէ «անագին ուժ մը պարաստ կայ իր ձեռքին տակ եւ թէ ոսգմական անագնավիթիւսը ծրագրի մը գործադրելու պիտի սկսի քիչ ատենէն», այդ պիտը «ֆարսէօ» մը միայն կարելի է նկատել :

Ըսի որ պարագաները շատ փայլուն ըլլալու չեն Արփիարեանի շուրջը : Մնամէջ ֆուսիւնը ուլ խօսելու սովորութիւն չունին : Իմ եզրակացութիւններս միշտ իրողութիւններու վրայ կը հիմնուին թէ պարագաները փայլուն ըլլային, Արփիարեան «Նոր կեանք»ին համար վարդած չէր ըլլար այն գումարը զոր Ամերիկայի մասնախումբը զրկած էր որպէս զի Արզուեան Ամերիկա մեկնէր՝ գոհացում տալու համար այնտեղի Հնչակեաններուն միանամուռ բաղձանքին : Արզուեան կրցաւ մեկնել, շնորհիւ գումարի մը մը զոր բարեկամէ մը փոխ առաւ . . . Այս պայմաններուն մէջ, Արփիարեանին այլ եւս բնաւ պատճառ մը չի մնար «Նոր կեանք»ի հրատարակումն ապահոված ըլլալուն համար պարծենալու :

Իսկ հետաքրքիր եմ տեսնել մէ'կ Հնչակեան մը : մէ'կ Հայ մը, որ այս բոլոր գրածներուս մէջ վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան կործանման եւ անոր օրկանը եղող «Նոր կեանքին» ջնջման փախաքի մը ամենայնոցին նշոյլը գտնէ : Վերակազմեալ Հնչակեաններուն մէջ ես վստահ եմ թէ շատեր կան, որ արդէն դժգոհ իրերու կացութենէն եւ վերանորոգումի մը փախաքող, իրաւացի պիտի գտնեն ըսածներս եւ անոնց մէջ ուրիշ բան պիտի չտեսնեն բայց եթէ անաչառ քննադատութիւնը անկախ գիտողի մը որ այդ կուսակցութիւնը կը բաղձայ վերակենդանացած, կանոնաւորապէս եւ ամբողջ կազմակերպուած տեսնել : Ու ոչ ոք, վստահ եմ, բաց ի Արփիարեանէն եւ իր խմբակէն, պիտի մաքնն անցընէ թէ այս բոլորը կը դրեմ «Անահիտ»ին նիւթական ապահովումը ձեռք ձեռք ձգելու համար : «Անահիտ»ին հիմնարկութենէն ի վեր : ես ամէն բան ըրած եմ ապացուցանելու համար թէ նպատակաւ բաղձաթիւ բաժանորդներ ունենալը չէ, այլ կարգ մը գաղափարներ տարածելը, ոչ մէկ կուսակցութեան վրայ կրթնելու, ոչ մէկ դասակարգի հաճելի ըլլալու մէթոքը չեմ ուզած գործածել : «Անահիտ»ին տողուն ու տեւական «քլիանթէլ» մը ունենալու համար : Թերթին անկանոն հրատարակումը արդիւնքն եղած է նախնական ու եւ զբաւազողութիւն չգոյտութեան, բայց մասնաւոր կը իմ ազգային գործերով խճուղուած կեանքին՝ որուն ամենափոքր մէկ մասը միայն նու իրած եմ թերթին նիւթական վարչութեանը հսկելու : Այն վայրկեանին սակայն ուր այս տողերը կը գրեմ, կրնամ վստահաբար յայտարարել թէ «Անահիտ»ին գոյութիւնը վերջնապէս ապահովուած է, շնորհիւ Ֆրանսացի մէկ բարեկամիս, որ իմանալով այն պետութեանները որոնց մէջ կը գտնուէի

թերթի հրատարակելու համար, ինքնաբերաբար հաճեցաւ փոխ տալ գումար մը, որ պիտի թոյլ տայ ինձի այսուհետեւ «Անահիտ»ը հրատարակել եւրոպական հանդէսի մը կանոնաւորութեամբ :

Ինչ ալ ըլլայ յօդուածիս ազդեցութիւնը հանրային կարծիքին կամ վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան վրայ, ատի իմ անձնական գիրքիս եւ իմ թերթիս կացութեանը ու եւ փոփոխութիւն չի կրնար բերել :

Յօդուածս իրեն միակ նպատակ ունէր Արփիարեանի գործունէութեան մասին իմ կարծիքս յայտնել : Եթէ վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը իրաւացի գտնէ գիտողութիւններս եւ իրականապէս վերակազմէ ինքզինքը, — ինչ որ շատ լաւ կարող է ընելու, որովհետեւ շատ ուժեղ ու ազնիւ տարրեր կան իր մէջ՝ ամուր եւ գիտակից կեդրոնի մը պակասէն անշարժութեան դատապարտուած, — վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնն է որ այդ պարագային օգտուած պիտի ըլլայ այս յօդուածէն, եւ ոչ թէ ես :

ՓՐԱՆՍԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

«Իրօ Արմենիա»ն իր 25 փետրուարի թուով կը ծանուցանէ երեք ֆրանսական զբաւառի Մերսին զրկուելուն լուրը, եւ ֆրանսական կառավարութեան այդ վեհանձն արարքին իբրեւ միջի կը գրուատէ Պ. Պ. Տընիս Կոչէնը, Պարոն տ'Էսթրուանէն եւ Էօմէն Ֆուռնիէնը : Այդ երեք անուններուն վրայ պէտք է աւելցնել ֆրանքո-հայկական քումթէին անդամներէն Պ. Պ. Վիքթու Պէտարի, Էռնէսթ Լավիսի եւ Հ. Շարմըթանի անունները, եւ կառավարութեան անդամներուն մէջէն պէտք է Պ. Տէլքասէին հետ մասնաւորապէս շնորհաւորել եւ Պ. Միլուանը՝ այդ ազնիւ որոշումին համար : Եւ արդէն քանի որ այդ իրողութիւնը հրապարակուած է, կրնամ քանի մը մանրամասնութիւններ սալ այն պայմաններուն մասին որոնց մէջ կատարուեցաւ ան :

«Օտու»ին մէջ կարդալով այն հեռագիրը որ կ'իմացնէր թէ Էնիս փաշա Այնթապի եւ չըրջակայից Հայերուն դէմ ջարդեր կը սարքէ, նոյն օրն իսկ նամակ մը գրեցի Պ. Տէլքասէին, եւ խնդրեցի իր միջամտութիւնը, որ կարելի եւ գիւրբին էր՝ այդ ծովամերձ երկրին մէջ : գրեցի միանգամայն Պ. Միլուանին, որ Անաթոլ Ֆրանսի նախագահութեամբ կատարած բանախօսութեանս ներկայ գտնուած եւ իր հայասիրական դպացումներն յայտնած էր. խնդրեցի իրմէ որ խրախուսէ Պ. Տէլքասէն միջամտելու : Պ. Միլուան հաճեցաւ ինձի պատասխանել թէ «մասնաւորապէս ուշադրութիւնը հրաւիրած էր Պ. Տէլքասէին՝ այն իրողութիւններուն վրայ զոր իրեն մասնաւոր չ'ընէի»

Գիտեցի նաև Ֆրանսոսահայկական ընկերութեան անդամներէն Պ. Պ. Պէտարին, Լավրանիս եւ Շարմըթանին, որոնք զացին տեսան Պ. Տէլքասէն եւ խնդրեցին որ կրցածն ընէ վտանգին առաջն առնելու համար: Իսկ Տրնիս Գոչէն, որ մտադիր էր, հիմնուելով Հայաստանի այժմեան ընդհանուր ողբալի կացութեան մասին ընդարձակ տեղեկադրի մը վրայ զոր իրեն յանձնած էր, Խորհրդարանին մէջ հարցում մը ուղղել արտաքին գործոց նախարարին, փութաց յայտնել Պ. Տէլքասէին թէ որոշած է իր հարցումը ընել՝ եթէ կառավարութիւնը չգործէ անյայտագ Պ. Տէլքասէ պատասխանեց թէ կառավարութիւնը մտադիր է երեք նաւ զրկել, որոնք Միջերկրականի սովորական պատյոր ընելով հանդերձ՝ պիտի հանդիպին Կիլիկիոյ նաւահանդիսաներէն մէկը, որպէսզի Ֆրանսական դրօշակին երևումը այդ փոխընկերուն վրայ ջարդ սարքողները խոհեմութեան հրաւիրէ եւ սարսափի ու յուսահատութեան մէջ մնացած հայ բնակցութեան սիրտինք ու կազդոյր ներշնչէ: Յունվար 22ին օրը, երեք զրահաւոր, «Քօթիւ», «Տիւ Շէյլա» եւ «Լաթուշ Թանվիլ», ծովակալ Գայառի հրամանատարութեամբ, մեկնեցան Փուլոնէն:

Տակաւին չեն գիտեր թէ ինչ եղած է արդիւնքը այս արարքին: Բայց անտարակուսելի է որ ան սահմանուած է արդիւնք մը ունենալու, եւ կարեւոր արդիւնք մը: Ծովակալ Քայառը անշուշտ, իր պաշտօնական այցելութեանց մէջ, բարեկամական բայց կորովի խորհրդատուի ձեւով մը պիտի զգայնէ թուրք իշխանութեանց, թէ Ֆրանսական ժողովուրդն ու կառավարութիւնը չպիտի հանդուրժեն որ էնիս փաշա իր արիւնի ծարաւին. յազեցում մալու համար կոտորածներու շարք մը վերսկսի քննարկակապէս հանդարտ Հայերու դէմ:

Ֆրանսական կառավարութեան այս արարքը կ'ապացուցանէ, անդամ մը եւս, թէ Բոլ Ստան անիրաւ էր իր կոչը «ունայն» անուանելով եւ իր հայրենիքին սիրտը մեռած կարծելով: Պէտք է գիտել որ հայկական խնդրոյն ծագումէն ի վեր, ոչ մէկ եւրոպական պետութիւն, — բաց ի Ալեքսանդր Բ. ի Ռուսիայէն որ Սան-Սթեֆանոյի մէջ «հայկական խնդիրը» հիմնեց, — այսպիսի վարմունք մը չէր ունեցած: 95ին եւ 96ին Անդլիոյ բարձրագոյն զրահաւորները ծովուն վրայ պարտելով Չիստացան, եւ վճռական քայլը չուզեցին առնել՝ տեսնելով հանդերձ որ ամբողջ Փողովուրդ մը սուրի եւ հուրի էր մտատուած: Յմերիկն եւ Աւստրիա զրահաւորներ զրկեցին տաճկական նաւահանդիսաներուն առջև, իրենց հպատակներուն շահերը միայն պաշտպանելու համար: Ֆրանսական արդի կառավարութիւնը իր զրահաւորները Մերթին կը դրկէ՝ միմիայն վտանգում Հայերուն իր պաշտպանութիւնը չնորոգելու ու պատակով:

«Անտիտալ» ընթերցողները գիտեն թէ ինչ անխախտ հաւատք մը զոյց տուած եմ միշտ, եւ ինչ խորին յոյս մը, այս մեծ երկրին

վրայ, որ իրօք «մեր երկրորդ հայրենիքն է»: Այդ հաւատքն էր որ զիս մղեց գալ այստեղ մեր դատը ճանչցնելու եւ սիրցնելու աշխատել, ա՛յստեղ, այսինքն աշխարհիս սիրտը կազմող այս քաղաքին մէջ. որովհետեւ համոզուած էի թէ նախ ինչ որ Ֆրանսայի մէջ կատարուէր մեծ դատին համար, ամբողջ աշխարհիս մէջ արձագանք պիտի գտնէր եւ ամէն երկիրներէն համակրութեամբ ու առանց կասկածանքի պիտի ընդունուէր, եւ թէ մասնաւոր այս երկիրը, երբ անոր զուխը գտնուէին «ճշմարիտ Ֆրանսայիներ» եւ կրբ անոր ուշադրութիւնը լրջօրէն գիտնայինք հրաւիրել մեր առաջադիւններուն, մեր արժանիքներուն եւ մեր Ֆրանսայի աւ քաղաքակրթութեան հետ աւնեցած խորին կապերուն վրայ, այն երկրին էր նորէն որ ամենէն աւելի յօժար պիտի ըլլար՝ եւ կարող ալ՝ մեզ իրականապէս պաշտպանելու համար անկեղծ ու անշահաւոր նախաձեռնութիւն մը առնելու: Այդ համոզումով էր որ հինգ տարիէ ի վեր ըրի ամէն ինչ որ կրցայ մեր դատին նկատմամբ այս տրամադրութիւններուն, այս ձգտումներուն առաջնորդելու համար այն բոլոր Ֆրանսացի անձնաւորութիւնները որ այս երկրին ուղեղն ու ջիղերը կը կազմեն: Ուրախ եմ տեսնելով որ յոյսերուն մէջ չեմ խորուեր:

Մանուցանելով Պ. Տէլքասէի արարքը, Բիշկար կը խնդրէ որ Ֆրանսական կառավարութիւնը իր պաշտպանութիւնը տարածէ նաեւ մինչեւ Սասուն՝ որ դարձեալ վտանգի մէջ է: Բիշկար կ'աւելցնէ թէ պէտք չէ ուշադրութիւն դարձնել տաճիկ պաշտօնատարի մը խօսքին թէ՛ «եւրոպական զրահաւորները լեռներուն վրայէն չեն կրնար թռչել», եւ կը յորդորէ Ֆրանսական կառավարութիւնը որ Համիտը սանձահարէ որպէս զի չարիքին ամբողջ ազդիւրը ցամքի: Բիշկար կը սխալի տաճիկ պաշտօնատարի մը միայն վերագրելով այդ խօսքը: Անպիացիներն ալ այդպէս ըսին՝ երբ որոշեցին Հայերը լքանել: Յետոյ, Համիտը սանձահարելը, — պէտք է արդար ըլլալ, — Մերսին նաւ զրկելէն շատ աւելի դժուար գործ մըն է, ու եւրոպական ո եւ է պետութիւն՝ միտակը՝ չի կրնար զայն կատարել: Բայց պէտք է գիտնալ որ Պ. Տէլքասէ այդ ուղղութեամբ ալ արդէն ըրած է ինչ որ կրնար: Ամիս մը առաջ Պոլսոյ Ֆրանսական դեսպան Պ. Գոնսթանէն ստանալով շատ խռովիչ տեղեկագիր մը՝ Հայաստանի ընդհանուր կացութեան վրայ, Պ. Տէլքասէ զայն հաղորդած է եւրոպական բոլոր կառավարութեանց, ամենուն ուշադրութիւնը հրաւիրելով իրենց այս տագնապալից վիճակին վրայ եւ առաջարկելով որ համաձայնութեամբ որոշում մը արուի՝ վտանգին առաջն առնելու համար:

Ա. 2.

Le Gérant : AUGUSTE COTHIAS

Imp. Panvert 7 & 9, rue des Fossés-Saint-Jacques, Paris

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆՆԱ

# ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

## ՖՐԱՆՍԱԿԱՅ

ZUSHR UN-AGT

A - H

Դրամել հեղինակին, 108 Avenue de Neuilly, Neuilly sur Seine, կամ Բիւզանդեան գրատուն, Սեզրոս խան, թիւ 5, Ղալաթիա, Կ. Պոլիս: Գին 25 ֆր.: Ամբողջ գործը, որ պիտի բաղկանայ ընդամենը երկու հատորէ, պիտի արժէ 50 ֆր.:

### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՋ ՄԸ

Դ Ր Ե Ց

Ր Ո Պ Ե Ր Թ Ճ . Ի Ն Ր Ս Ո Լ

Թ Ա Ր Դ Մ Ա Ն Ե Ց

ԵՐՈՒԱՆԴ Ա . ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

Թարգմանիչը կը խնդրէ մենէ ծանուցանել թէ սոյն դիրքը ձրիաբար կը շրկուի բոլոր գը-  
րադարաններուն, եթէ դիմեն իրեն հետեւալ հասցէով .

Ed. Iknadiossian

86, Essex st.

BOSTON, MASS. U. S. A.

### ՐԱՅՑԻ

«ԴԱԻՒԹ ԲԵԿ» Ա. Բ. Գ. հատոր վերջաբանով, եւ «ԿԱՅՄԵՐ» լիակատար:

Իւրաքանչիւրի բաժանորդագինն է 5 շիլին: Լոյս կը տեսնեն ներկայ 1901 թւի ընթաց-  
քում եւ կ'ուղարկուին բաժանորդներին որպէս «Սամուէլ»ը եղաւ: Բաֆֆիի միւս երկերը ու-  
նենալու համար ցանկացողները պիտի դիմեն մեզ: Կարելի է գտանալ Նրիմեան Հայրիկի, Մե-  
րենցի եւն գրքեր:

Ամեն տեսակի դիմում կամ պատուէր պիտի ուղղել հետեւեալ հասցէին՝

M<sup>ME</sup> RAFFI

47, UXBRIDGE ROAD

SHEPHERD'S BUSH

LONDON W.

### ՆՇԱՆ Պ. ԹՈՐՈՍԵԱՆ

«Անահիտ»ի գործակալ Բուսնուֆի մեջ

«Թ՛ւմպո-փոսթեր»ու գնում, վաճառում եւ փոխանակութիւն՝ հաւաքածոներու համար: Մաս-  
նաւորապէս՝ պուլկարական նամակադրոշմներ, մեծաքանակ, սովորական կամ հազուագիւտ:  
Տեղեկութիւն ուղղողները պատասխան ընդունելու համար նամակադրոշմ մը ներփակելու են ի-  
րենց նամակներուն մէջ:

Հասցէ՝ Nichan S. Torossian, Roustchouk, Bulgarie

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտը կը հրատարակուի ամիսը մէկ անգամ :  
 Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 2 տոլար (Ամերիկա), 5 րուպլի (Ռուսիա) . վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 րուպլի Ռուսիա :  
 ԲԱԺԱՆՈՐԴԱԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :  
 Ձեռագիրները ետ չեն դարձուիր .  
 Կ'ընդունուին ազգեր :  
 Նամակ , յօդուած եւ բաժանորդագրին ղրկել հետեւեալ հասցէին :

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

- |                                    |                          |
|------------------------------------|--------------------------|
| ՎԱՌՆԱ                              | Պարոն Տր. Յ. Ս. Փափազեան |
| ՌՈՒՍՃՈՒԲ                           | » Նշան Ս. Թորոսեան       |
| ՖԻԼԻՊՊԷ                            | » Ա. Մ. Տեմիրճիպաշեան    |
| ՊՈՒԲՐԷՇ                            | » Արիս Լազար             |
| ԴԱԻՐԷԺ                             | » Տր Կ . Փաշեան          |
| ՆԻԻ-ԵՈՐԲ .                         | » Պ Կատարեան             |
| ԲՐՈՎԻՏԷՆՍ (Ամերիկա)                | » Նազարէթ Թաթէոսեան      |
| ԶԻՔԱԿՅՈ (Իւլ . Ամերիկա)            | » Ա. ԳարակաՎուրեան       |
| ԻՍԹ-ՈՒՅԸԹՐԹԱՈՒՆ. (Մաս . , Ամերիկա) | » Մանուկ Գալստեան        |
| ՈՒՍԹԸՐ . (Մաս . , Ամերիկա)         | » Երուանդ Յակոբեան       |